

ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐ **Գազիկ Տեր-Հարությունյան**

Ընթացող «ճգնաժամի» վերաբերյալ լրատվական դաշտում կարելի է հանդիպել հոռետեսական կամ լավատեսական, իսկ երբեմն՝ անգամ «իրատեսական» կանխատեսումների, որոնք ստացվում են «վատ» եւ «լավ» սցենարների պարզունակ համադրումից: Ապագան նկարագրող այդ սցենարներին դժվար է գնահատական տալ. ճգնաժամային գործընթացները փոխում են արժեքային համակարգերի վերաբերյալ պատկերացումները, ինչն էլ իր հերթին հարաբերական է դարձնում «լավի» կամ «վատի» հասկացությունները: Նման անորոշություններ պարունակող իրողություններում ազգային ընտրանու աղեկվատ կողմնորոշվելու խնդիրն առաջնային նշանակություն է ձեռք բերում:

Մինչ այդ՝ փորձենք համառոտ թվարկել ընթացող համակարգային փոփոխությունները.

1. Լիբերալ (ազատական) գաղափարախոսությունը զիջում է գերակայող դիրքերը, եւ ներկայումս առաջատար երկրներում ձեւավորվում է յուրօրինակ բազմազաղափարախոսական դաշտ, որը կազմված է ունիվերսալ (լիբերալ, սոցիալիստական) եւ ազգային գաղափարախոսական դրույթների համադրումից: Ազգային բաղադրիչն իր մեջ կրում է քաղաքակրթական ինքնուրույն միավորի վերաբերյալ տեղեկատվություն եւ փաստորեն հանդիսանում է տվյալ հանրության մրցունակությունը պայմանավորող գործոն:

2. Նախկին միաբեւեռ ու «գերկազմակերպված» ռազմաքաղաքական համակարգը ձեւափոխվել է բազմաբեւեռի: Այս փուլում աճել է նոր, այդ թվում՝ միջուկային բնույթի հակամարտությունների առաջացման հավանականությունը:

3. Նոր իրողություններն ազդել են գլոբալացման երեւույթի վրա: Այժմ այդ գործընթացը հարուցվում է ոչ թե մեկ, այլ հոգեմտավոր եւ նյութական ռեսուրսների անհրաժեշտ զանգված ունեցող մի քանի քաղաքակրթական կենտրոնների կողմից: Նման գործընթացը ենթադրում է եւ կոնվերգենցիա (փոխազդում), եւ կոնֆրոնտացիա (առճակատում): Արդյունքում՝ մեծանում է գլոբալ «անկարգավորվածության» կամ «քաոսի» մակարդակը եւ զուգահեռաբար կարելուրվում է «քաղաքակրթական երկխոսության» անհրաժեշտությունը:

Վերոնշյալ փոփոխություններն անխուսափելիորեն անդրադառնում են նաև հայկական իրողությունների վրա: Կասկած չի հարուցում, որ այդ նոր տիպի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ոչ միայն կենտրոնացնել մեր ունեցած միջոցները, այլև նոր որակի ռեսուրսներ ստեղծել: Դրանց շարքում, ըստ մեզ, հատուկ տեղ պետք է գրավեն տարաբնույթ ռազմավարությունների եւ տեխնոլոգիաների մշակումները:

Միեւնույն ժամանակ, ցանկացած ռազմավարություն ենթադրում է ելակետային իրադրության վերաբերյալ հստակ պատկերացումներ:

Հայաստան – Հայություն համակարգի բնութագիրը

Ակնհայտ է, որ վերոնշյալ խնդիրների համատեքստում մեր մրցունակությունը հնարավոր է ապահովել միայն ՀՀ, ԼՂՀ եւ Հայության ռեսուրսների համախմբման պարագայում: Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այդ ռեսուրսների մի զգալի, եթե ոչ հիմնական, մասը պատկանում է արտերկրում բնակվող հայերին, որոնց մի մասը տարադավան է ու տարալեզու: Կախված բնակության երկրից՝ տարբեր են նաև հայերի աշխարհաքաղաքական կողմնորոշումները: Տեղեկատվական (հաղորդակցման) տեսանկյունից՝ որոշակի բարդություններ է առաջացնում նաև «արեւելահայերենի» եւ «արեւմտահայերենի» միջև եղած տարբերությունը: Հաշվի առնելով այս ամենը՝ անհրաժեշտ է փաստել, որ այսօր Հայության հիմնական կառուցողական եւ համախմբող գաղափարը հայկական քաղաքակրթական – պատմական ընդհանրությունն է¹:

Դրան զուգահեռ, հարկ է գիտակցել, որ հայկական քաղաքակրթությունը, ինչպես արդեն նշեցինք, համասեռ չէ, եւ նրա տարբեր հատվածների աշխարհընկալումն ու նույն այդ քաղաքակրթության վերաբերյալ պատկերացումները երբեմն տարբեր են: Այսինքն՝ այդ չափանիշներից ելնելով, մեր քաղաքակրթությունը հարում է այսպես կոչված «մասնատված քաղաքակրթություններին», որոնց փլուզման հնարավորությունը, ինչպես հայտնի է, բարձր է:

Այսպիսով, առկա է փոքր-ինչ պարադոքսալ իրադրություն. ծեւավորվող նոր պայմաններում մեր զարգացման եւ հարատեւման միակ երաշխիքը համախմբված քաղաքակրթական միավոր լինելն է, սակայն այդ քաղաքակրթության ներկայիս իրավիճակն օբյեկտիվորեն պարունակում է կազմալուծման զգալի ռիսկեր:

Ամրագրելով նշված մարտահրավերների օբյեկտիվ բնույթը՝ պետք է, սակայն, չմոռանալ, որ ցանկացած ճգնաժամային, «բացասական» իրադրություն պարունակում է նաև նոր հնարավորություններ: Մասնա-

վորապես, Հայության բազմազանությունը կարող է ի նպաստ դրվել մեր ազգային շահերին. օրինակ, ներկայիս քաղաքակրթական առճակատման պայմաններում, մեր տարադավան-տարալեզու հատվածները կարող են կատարել յուրահատուկ առաքելություն եւ վերածվել Հայության շահերն իրականացնողների այլ աշխարհաքաղաքական եւ մշակութային գոտիներում: Սակայն ակնհայտ է, որ նման ռազմավարության իրագործումը հնարավոր է միայն ազգային կազմակերպվածության բարձր մակարդակ ունենալու պարագայում:

Ցանցակենտրոն համակարգի մասին

Հայության կազմակերպման խնդիրներին այսօր անհամեմատ ավելի շատ է ուշադրություն դարձվում, քան նախկինում: Մասնավորապես, հրապարակումներում հաճախ կարելի է հանդիպել այն մտքին, թե ազգային կազմակերպման ամենաարդյունավետ միջոցը «ցանցակենտրոն կառավարման» համակարգի ձեւավորումն է: Միեւնույն ժամանակ, տպավորությունն այնպիսին է, որ երբեմն այդ հասկացողությունը փոքր-ինչ պարզունակ է ընկալվում: Այս տեսանկյունից ավելորդ չէ համառոտ անդրադառնալ քաղաքական այդ տեխնոլոգիայի ձեւավորման պատմությանը եւ էությանը:

«Ցանցակենտրոն պատերազմների» հայեցակարգը ստեղծվել է նախորդ դարի 90-ականների վերջին՝ ամերիկյան ՌԵՆԴ կորպորացիայի աշխատակիցներ Ջ.Աքվիլի եւ Դ.Ռոնֆելտի կողմից: Որպես ելակետ ընդունվել է այն դրույթը, որ տեղեկատվական հասարակարգում պետության (հանրության) հզորությունը, առաջին հերթին, կախված է իրազեկվելու, տեղեկատվություն ստանալու նրա հնարավորությունից, դրանց համապատասխան արձագանքելու ունակությունից: Ըստ հեղինակների պատկերացումների, «ցանց» հասկացողությունը ենթադրում է հրաժարվել ինդուստրիալ հասարակարգին բնորոշ «կենտրոն – ծայրամաս» հիերարխիկ կառավարման մեթոդից եւ ձեւավորել հստակ կառուցվածք չունեցող, այսինքն՝ ոչ ստրուկտուրիզացված համակարգ, որը ենթարկվում է ինքնազարգացման եւ ոչգծային գործընթացների տրամաբանությանը: Նման համակարգում բացակայում է «կենտրոնը», սակայն համակարգը կազմող օղակներից յուրաքանչյուրն իր վրա կարող է վերցնել ղեկավարող «կենտրոնի» գործառույթները:

ՌԵՆԴ-ի առաջարկած հայեցակարգը գրավեց ռազմական ստրատեգների (Դ.Ռամսֆելդ, Փ.Վուլֆովից եւ այլք) ուշադրությունը, ու շատ արագ այդ կոնցեպտի գործնական ներդրումով սկսեցին զբաղվել բազմաթիվ

«ուղեղային կենտրոններ»: Պենտագոնում հիմնադրվեց «Ջինված ուժերի ձեւափոխման» դեպարտամենտը, որը, ելնելով ցանցային պատերազմների սկզբունքներից, իրագործում է ամերիկյան գինուժի բարեփոխումները եւ կատարում նոր մշակումներ: Վերջիններից առանձին ուշադրության է արժանի «էֆեկտների վրա հիմնված գործողությունների» դոկտրինը, որը սահմանվում է որպես «գործողությունների համախումբ՝ ուղղված բարեկամների, չեզոք ուժերի եւ թշնամիների վարքագծի մոդելի ձեւավորմանը խաղաղության, ճգնաժամի ու պատերազմի պայմաններում»:

Այսպիսով, «ցանցակենտրոնության» հայեցակարգը ներկայացնում է.

❖ բարձր մտավոր ռեսուրսների տիրապետող համակարգ, որի բաղադրիչներն ունակ են լիարժեք իրազեկվել եւ արագ ու ադեկվատ արձագանքել ստացած տեղեկատվությանը,

❖ պատերազմական իրավիճակի (լայնորեն մեկնաբանելով այս հասկացությունը եւ նկատի չունենալով զուտ ռազմական գործողությունները) գիտակցություն եւ համապատասխան հոգեբանություն ու գործելաոճ:

Որոշ հետեւություններ

Այս ամենից հետեւում է, որ կազմակերպման եւ կառավարման «ցանցակենտրոն» տեխնոլոգիաների իրագործումը Հայությունից պահանջում է մտավոր-կազմակերպչական ռեսուրսների կրիտիկական զանգված եւ հոգեւոր-հոգեբանական մարտական պատրաստվածություն: Ակնհայտ է, որ այդ ռեսուրսներին տիրապետելու եւ դրանք համապատասխանորեն կիրառելու համար անհրաժեշտ է համապատասխան ունակություններ ունեցող մտավոր ընտրանի: Բնորոշ է, որ հանրահայտ բրիտանացի քաղաքագետ Աննոլդ Թոյնբին հենց այդ «ստեղծագործ փոքրամասնության» առկայությամբ էր պայմանավորում քաղաքակրթությունների հարատեւումը:

¹ Այս առիթով նկատենք, որ Հայության վերաբերյալ պատկերացումների նեղացման փորձը՝ ներկայացնելով այն ոչ թե քաղաքակրթական միավոր, այլ զուտ որպես միատարր էթնոդավանական համախումբ, միանշանակորեն հակասում է մեր ազգային շահերին:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ **Սուրեն Մանուկյան**

Ժխտողականությունն ուղեկցում է բոլոր ցեղասպանություններին: Իրականացրած ոճիրը քողարկելու, այն ժխտելու քաղաքականությունը հատուկ է բոլոր ցեղասպաններին, եւ Թուրքիան, անշուշտ, դրա վառ օրինակն է:

Ժխտողականությունը Թուրքիայում իրականացվում է պետական մակարդակով: Ցեղասպանությունների եւ մարդկության դեմ հանցագործությունների հանրագիտարանը Հայոց ցեղասպանության ժխտումն անվանում է «սեփական անցյալը ժխտելու՝ պետության ամենաբացահայտ օրինակը»: Այսօր Թուրքիայում գրեթե բոլոր պատմագիտական կազմակերպությունները, խոշորագույն թերթերը, հեռուստատեսությունն ու ռադիոն ներգրավված են այս քաղաքականության մեջ:

Մի շարք թուրք, ինչպես նաեւ թուրքական պետության կողմից ֆինանսավորվող արեւմտյան գիտնականների հիմնական առաքելությունն է դարձել «զուգահեռ» պատմության ստեղծումը, որն իրականության հետ շատ քիչ կապ ունի եւ ժխտում է հայերի ցեղասպանությունը:

2001թ. ապրիլին Անկարայում հիմնադրվեց Հայկական հետազոտությունների ինստիտուտը, որի հիմնական խնդիրներից մեկը Հայոց ցեղասպանության թեմայի արժարժման դեմ պայքարն ակադեմիական շրջանակ տեղափոխելն է: Բացի այդ, թուրքական կառավարությունն ամեն կերպ աջակցում է աշխարհի նշանավոր համալսարաններում թուրքական պատմության եւ մշակույթի ուսումնասիրության ամբիոններ հիմնադրելուն, որոնց գործունեության մեջ ժխտման քաղաքականությունը շատ մեծ դեր ունի:

Ցեղասպանության իրականացման ծրագրի գոյության հարցը

Ցեղասպանության ժխտման ընթացքում կասկածի տակ է դրվում ցեղասպանության իրականացման մտադրության եւ ծրագրի գոյությունը:

Օրինակ, հրեաների բնաջնջման հրամանների վավերագրեր չեն պահպանվել, եւ սա Հոլոքոստը ժխտողների կողմից համարվում է հրեական ցեղասպանության ծրագրված չլինելու ապացույց: Նույն մեխանիզմը կիրառվում է նաեւ Հայոց ցեղասպանության պարագայում. Թուրքիան պնդում է, որ չկա հայերին բնաջնջելու հրամանի եւ ծրագրի գրավոր արձանագրված վավերագիր:

Եթե նույնիսկ կասկածի տակ առնենք 1920թ. Լոնդոնում Արամ Անտոնյանի կողմից հրատարակված երիտթուրքական կառավարության ներքին գործերի նախարար Թալեաթի՝ Օսմանյան կայսրության հայ բնակչության տեղահանության եւ ոչնչացման մասին գաղտնի հրամանագրերը, որոնք Անտոնյանին էր փոխանցել Յալեա քաղաքի հայերի տեղահանության կոմիտեի գլխավոր քարտուղար Նաիմ բեյը, միեւնույն է՝ Յայոց ցեղասպանության կազմակերպված եւ ծրագրված լինելու փաստն ուղեկցվում է ապացույցների անվիճելի, հսկայական զանգվածով:

Այդպիսին են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայի դաշնակիցներ Գերմանիայի եւ Ավստրո-Յունգարիայի արխիվներում պահվող պաշտոնական փաստաթղթերը, այդ երկրների դեսպանների եւ հյուպատոսների զեկուցագրերը, Կ.Պոլսում ամերիկյան դեսպան Յենրի Մորգենթաուի հեռագրերը, բազմաթիվ օտարազգի ականատեսների վկայությունները եւ, վերջապես, 1919–1921թթ. Ստամբուլում երիտթուրքական առաջնորդների նկատմամբ հենց թուրքերի կողմից կայացված դատավճիռները, մեղադրական եզրակացությունները եւ ականատեսների վկայությունները:

Այս վերջին ու շատ զորեղ ապացույցը նույնպես կասկածի տակ առնելու փորձ է արվում: Յայտարարվում է, որ երիտթուրքերի դատավարություններն ընթացել են Առաջին համաշխարհային պատերազմում հաղթած մեծ տերությունների ճնշման ներքո: Սա նույնպես բացարձակ անիմաստ փաստարկ է, քանի որ այդ դեպքում պետք է կասկածի տակ դնել նաեւ Նյուրնբերգյան դատավարության արդյունքները, որոնք նույնպես ընթացել են պատերազմում հաղթող պետությունների վերահսկողության տակ, սակայն որոնց վճիռները Թուրքիան անվերապահորեն ընդունել է:

Տեղահանություն եւ ոչ թե կոտորած. քաղաքացիական պատերազմի վարկածը

Ըստ թուրք պատմաբանների՝ հայերի անհետացումն իրենց բնակության վայրերից տեղի է ունեցել մեծ մասամբ ոչ թե ծրագրված զանգվածային ոչնչացման, այլ ընդամենը ռազմաճակատի գոտուց հայ բնակչության մի մասի տեղափոխման պատճառով, քանի որ քրիստոնյա հայերն անհուսալի տարր էին Ռուսաստանի դեմ պատերազմի ընթացքում: Ըստ թուրքերի՝ ճանապարհին տեղահանվողների մի աննշան մաս զոհվել է սովից, հիվանդություններից եւ այլ պատճառներից, որոնցից էին նաեւ պատերազմի ընթացքում անիշխանության մատնված որոշ շրջաններում գործող ավազակախմբերի հարձակումները: Վերջին շրջանում ի հայտ է

եկել նաեւ մի նոր թեզ՝ սպանված հայերի հետ մեկտեղ նշվում են նաեւ սպանված թուրքեր, առաջ է քաշվում նաեւ քաղաքացիական պատերազմի եւ հայերի ապստամբելու վարկածը:

Սակայն այս թեզերը ոչ մի քննարկման չեն դիմանում: Հայերի բռնի տեղահանումն իրականացվել է ոչ միայն «Արեւելյան Անատոլիայից» (Արեւմտյան Հայաստանից), որի մի մասը պատերազմի թատերաբեմ էր, այլեւ ամբողջ Անատոլիայից եւ նույնիսկ ռազմաճակատից շատ հեռու գտնվող վայրերից:

Ապստամբության վարկածը բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Թուրքական հրամանատարության զեկուլյցներում հանդիպում ենք պատերազմի ընթացքում հայերի հավատարմության մասին բազմաթիվ արձանագրությունների, իսկ Վանի ինքնապաշտպանությունը, որը, ամենահաճախն է նշվում իբրեւ ապստամբության փորձ, 1915թ. ապրիլին էր, այն դեպքում, երբ տեղահանության մասին որոշումը մարտին էր ընդունվել եւ զանգվածային սպանություններն արդեն իսկ սկսվել էին: Իսկ սպանդի տեսարանները նկարագրում են գրեթե բոլոր ժամանակակիցները՝ հայազգի թե օտար, Թուրքիայի հակառակորդ թե դաշնակից, քրիստոնյա, մուսուլման թե հրեա, ընդ որում՝ նշելով պետական պաշտոնյաների եւ բանակի միանշանակ մասնակցությունը: Հսկայական ֆոտոնյութը գալիս է վավերացնելու տեղահանության պատրվակով կազմակերպված ժողովրդի բնաջնջման փաստը:

Կեղծ թվաբանություն

Թուրքական կողմի ծավալած բանավեճի հիմնական թեմաներից է ցեղասպանության տարիներին զոհված հայերի թիվը: Ժխտողականները կասկածի տակ են դնում մեկուկես միլիոն զոհերի թիվը: Բացարձակ կերպով ժխտել հայերի զանգվածային սպանությունները՝ ուղղակի անհնար է, եւ փորձ է արվում կասկած առաջացնելով այս մասնավոր հարցի վերաբերյալ, տարածել այդ կասկածը նաեւ ամբողջ երեւույթի վրա: Այսպես, Հայոց ցեղասպանության հայտնի ժխտողներից մեկը՝ Ջասֆին Մըքքարթնին, հենվելով վիճահարույց հետազոտությունների վրա, նշում է, որ կայսրությունում մինչեւ 1915թ. ապրում էր ընդամենը մեկուկես միլիոն մարդ: Ըստ Թուրքական պատմական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաչօղլուի, հայ զոհերի թիվը 56 հազարի է հասնում, որոնցից ընդամենը 10 հազարն են սպանված:

Այս փաստարկի օգտագործումը, մեղմ ասած, տարօրինակ է: Բոսնիական Սրեբրենիցայի սպանդի պատասխանատուները դատապարտվել են Հաագայի միջազգային դատարանի կողմից՝ իբրեւ ցեղասպանություն

իրականացնողներ, թեև այնտեղ սպանվեց «ընդամենը» 7 000 մարդ: Սակայն եթե նույնիսկ փորձենք մտնել այս բանավեճի մեջ, ապա ամենախոսուն փաստարկը հենց թուրքական պաշտոնական վիճակագրությունն է: Երիտթուրքական կուսակցության տապալումից հետո, 1918թ. դեկտեմբերին, ներքին գործերի նախարար Մուսթաֆա Արիֆի նախածեռնությամբ կազմվեց մի հանձնաժողով, որը պետք է հետաքններ այս հարցը: Այն աշխատեց երեք ամիս եւ արդյունքները հասարակության դատին ներկայացրեց նոր ՆԳ նախարար Ջեմալ բեյի օրոք՝ 1919թ. մարտի 14-ին: Ըստ այդ տվյալների՝ սպանված հայերի թիվը 1914–1918թթ. կազմում էր 800 000:

Օսմանյան արխիվների առասպելը

Ժխտողականները պնդում են, որ բազմաթիվ փաստեր, փաստաթղթեր եւ վկայություններ ստեղծվել են հենց հայերի կողմից: Այս պնդումն ուղեկցվում է այն քարոզչական աշխատանքով, որը տարվում է օսմանյան արխիվները բացելու փաստի առնչությամբ:

Օսմանյան արխիվները հսկայական նյութ են պարունակում ոչ միայն թուրքերի, այլև երկար ժամանակ օսմանյան տիրապետության տակ գտնվող ժողովուրդների պատմության մասին: Այն, որ դրանք կարող են Թուրքիայի համար վտանգ ներկայացնել, Անկարան հասկացավ դեռ 1960-ականներից, երբ միայն եզակի մասնագետների էր իրավունք տրվում մուտք գործել օսմանյան արխիվներ: Տարիների ընթացքում իրականացվում էր արխիվային փաստաթղթերի ընտրությունը եւ համակարգումը՝ Թուրքիայի Գլխավոր արխիվային վարչության տնօրեն Իսմեթ Միրօղլուի գլխավորությամբ: 1989թ. մայիսի 16-ին թուրքական կառավարությունը հանդիսավորությամբ հայտարարեց օսմանյան արխիվները բացելու մասին: Բացվում էին հայերի մասին փաստաթղթերը, ընդ որում՝ հատուկ հանձնաժողովի կողմից 7 մլն դասակարգման ենթարկված փաստաթղթերից բացվել էին ընդամենը 10 հազարը: Սա հայտարարվեց աննախադեպ քայլ՝ լռության մատնելով այն փաստը, որ 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո հսկայական քանակությամբ փաստաթղթեր ուղղակի այրել էին:

Սակայն, եթե նույնիսկ օսմանյան արխիվները չմաքրազերծվեին, հայերի զանգվածային ոչնչացման մասին որոշում կամ ուղղակի հրահանգներ դժվար թե հնարավոր լիներ այնտեղ գտնել. որոշումն ընդունվել է երիտթուրքական վերնախավի շատ նեղ շրջանակի կողմից, հրամանները հիմնականում բանավոր էին եւ գաղտնի:

Ժխտողականության պատճառները

Ինչո՞ւ թուրքերը չեն ընդունում ցեղասպանության փաստը: Չէ՞ որ ժամանակին «Միություն եւ առաջադիմություն» կուսակցության առաջնորդները դատապարտվեցին, այլ հանցագործությունների հետ մեկտեղ, նաեւ հայերի զանգվածային սպանություններ իրականացնելու համար: Նույնիսկ Քենալ Աթաթուրքն է բազմիցս խոսել այս թեմայով եւ դատապարտել կոտորածները՝ դրանք անվանելով «ամոթալի գործողություն» եւ պահանջելով պատժել մեղավորներին: Այսինքն՝ տեսականորեն կարելի է ընդունել հայերի ոչնչացումը՝ բացատրելով, որ այդ ոճրագործությունները կատարվել են Օսմանյան կայսրությունում եւ կապ չունեն ներկայիս թուրքական հանրապետության հետ: Սակայն, իրականում թուրքական պետական մեքենան եւ հասարակությունը կատաղի ձեռով ժխտում են սեփական մեղավորությունը, եւ դրա համար կան հիմնավոր պատճառներ: Այդ պատճառներին անդրադարձել են մի շարք հետազոտողներ, որոնք հիմնականում առանձնացնում են վախի երեք գործոն.

ա) *Չտուլցման վախը*. հայերն Օսմանյան կայսրության մշակութային առումով ամենազարգացած եւ տնտեսապես ամենահզոր համայնքներից էին: Ցեղասպանությունից հետո այդ հսկայական հարստությունն անցավ նրանց կոտորածների կազմակերպիչներին եւ մարդասպաններին: Թուրքական խոշորագույն առևտրական ընտանիքներ եւ տնտեսական ընկերություններ իրենց հարստության կուտակման պատմության մեջ ունեն հայկական հետք: Հենց այս ուժերը մտավախություն ունեն, որ ցեղասպանության ճանաչումն իր հետ փոխհատուցման պահանջ կբերի: Փոխհատուցման հսկայական չափերի պատճառով այն կարող է ձեւափոխվել տարածքային պահանջների, այն դեպքում, եթե թուրքական պետությունն ի վիճակի չլինի վճարել պահանջվող ռեստիտուցիան:

բ) *Հերոսների վարկաբեկման վախ*. քեմալական շարժմանը միացել էին նախկին երիտթուրքական կուսակցության բազմաթիվ անդամներ, որոնք դատապարտվել էին կառավարության կողմից, այդ թվում՝ նաեւ հայերի դեմ իրագործած ոճրի համար: Այս մարդկանց համար թուրքական ազգայնական եւ հեղափոխական շարժմանը միանալը պատասխանատվությունից խուսափելու միակ միջոցն էր: Հետագայում նրանք կարելորագույն պաշտոններ ստացան նոր թուրքական հանրապետությունում եւ ամենակարելորդ՝ լրացրին նոր ստեղծվող հերոսական պանթոնը: Օրինակ, Շուքրու Կայան՝ Քեմալի ստեղծած ժողովրդա-հանրապետական կուսակցության գլխավոր քարտուղարը եւ ներքին գործերի նախարարը, հայերի տեղահանության գլխավոր պատասխանատուներից էր եւ

բազմաթիվ անգամներ հայտարարել է գերմանական հյուպատոսներին. «Մենք պետք է ոչնչացնենք հայերին», Սուլթաֆա Աբդուլհալիբ Ռենդան՝ հանրապետական շրջանում Ազգային ժողովի նախագահը, հազարավոր հայերի էր ողջակիզել Մուշում: Ճշմարիտ պատմության պարագայում հանրապետության հիմնադիրները մարդասպաններ եւ հանցագործներ են ներկայանալու:

գ) *Ինքնության ճգնաժամի վախ*. Խնդրի հանրային քննարկման հիմնական խոչընդոտներից է արդի թուրքական հասարակության կոլեկտիվ հիշողության կորուստը: Երբ Աթաթուրքը ստեղծում էր նոր պետություն, նա իրական պատմությունը փոխարինեց պաշտոնական պատմությունով, որում պատերազմական պարտությունները եւ ազգային/կրոնական փոքրամասնությունների դեմ գործած արյունալի ոճրագործություններն ուղղակի չեն հիշատակվում եւ այդպիսով հասարակության քննարկումներից դուրս են բերվում:

Կարելի է ասել, որ հայերին բնաջնջելով՝ օսմանյան առաջնորդները յուրատեսակ կերպով վրեժխնդիր էին լինում եվրոպական տերություններից իրենց կրած նվաստացումների համար եւ ազատվում սեփական բարոյություններից: Քեմալական առաջնորդները ոչ միայն մաքրեցին այս տրավմայի հետեւանքները, այլեւ վերաշարադրեցին պատմությունը եւ վերածեցին ազգային ինքնությունը: Եվ այդ ժամանակվանից սկսած՝ թուրքական պետությունն ինքն է ճնշում ցանկացած նախաձեռնություն, որը կփորձեր վեր հանել «արգելված պատմությունը»: Չայոց ցեղասպանության ընդունումը կոչնչացնի բոլոր այն պատկերացումները, որոնց վրա խարսխված է հանրապետական թուրքիայի պատմությունը. այս դեպքում հակաինպերիալիստական պատերազմը դառնում է հայ եւ հույն փոքրամասնության դեմ պատերազմ, առաջին ժողովրդական ջոկատները՝ Kuvay-i Milliye, որոնք ներկայացվում են իբրեւ անկախության մարտիկներ, դառնում են ուղղակի Չայոց ցեղասպանության գոհերի ունեցվածքի հաշվին հարստացած ավազակախմբեր: Ստացվում է, որ Սուլթաֆա Քեմալը ոչ թե ազգային-ազատագրական պայքար է մղել եւ հիմնադրել Թուրքիայի Չանրապետությունը, այլ ընդամենը իրականացրել է երիտթուրքերի պահեստային տարբերակը եւ բնաջնջելով հայերին ու հույներին՝ ապահովել գոնե մասնատված կայսրության պահպանումը:

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՁ ՕՏԱՐ ՉԹՎԱՑ...»

Հարցազրույց Ֆեթիյե Չեթինի հետ

Ֆեթիյե Չեթինի անունը վերջին տարիներին բավական հայտնի է դարձել հայ հասարակությանը: Լինելով փաստաբան՝ նա երկար տարիներ վարում է «Ակոս» թերթի հիմնադիր Հրանտ Դինքի եւ նրա ընտանիքի դատական գործերը: Չեթինը ծանաչում ծեռք բերեց հատկապես այն բանից հետո, երբ հրատարակվեց նրա «Մեծ մայրս» հուշագրական վիպակը, որտեղ փաստերի հիման վրա վերապատմում է տատի՝ Հերանուշ Կատարյանի կյանքի պատմությունը: Վերջինս Հայոց ցեղասպանության ժամանակ առեւանգված եւ իսլամացված հայ երեխաներից մեկն է եղել: Հարկ է նշել, որ գիրքը յուրահատուկ սկիզբ դարձավ Թուրքիայում իսլամացված հայերի խնդրի բարձրաձայնման համար: «Մեծ մայրս» գրքին հաջորդեցին նմանատիպ բովանդակությամբ այլ գրքեր: Բացի այդ, գիրքը խթանեց Թուրքիայում ուժացման տարբեր մակարդակներում գտնվող մարդկանց արմատների որոնման, իրենց նախնիների իրական պատմությունների ուսումնասիրման գործընթացը: «Մեծ մայրս» գիրքը 2006թ. թարգմանվեց արեւելահայերեն եւ հրատարակվեց Երեւանում՝ դառնալով ամենաշատ վաճառվող գրքերից մեկը: 2008թ. այն վերահրատարակվեց երկրորդ անգամ, որի շնորհանդեսին մասնակցեց նաեւ հեղինակը: Օրերս իր գրքի եւ ընդհանրապես իսլամացված հայերի թեմայի շուրջ մենք զրույց ենք ունեցել Ֆեթիյե Չեթինի հետ, որը ներկայացնում ենք ստորեւ:

Ռ. Մ.

Հարց – Ձեր «Մեծ մայրս» գիրքն արդեն մի քանի լեզվով թարգմանվել է, անցյալ տարի Երեւանում երկրորդ անգամ հրատարակվել արեւելահայերեն: Ըստ Ձեզ, ո՞րն է գրքի հաջողության գաղտնիքը, եւ ինչպե՞ս է ի հայտ եկել այն գրելու միտքը:

Պատ. – Իմ կարծիքով՝ ամենակարեւոր պատճառը, ինչի շնորհիվ գիրքն ուշադրության է արժանացել, այն է, որ հիմքը մարդակենտրոնությունն է. մարդուն հատուկ ցավը, զգացմունքները, հարաբերությունները, դեպքերը գրքում ներկայացված են մարդկային եւ խղճի տեսանկյունից: Նշանակություն ունի նաեւ գրքի անկեղծ եւ պարզ լեզուն: Տատիս դառը պատմությունն այնքան էի կարեւորում, որ իմանալուց անմիջապես հետո

որոշեցի, որ այն անպայման պետք է թղթին հանձնել: Սակայն մտահոգու՜մս երկար ժամանակ չկարողացա իրագործել, որովհետև կարծում էի, թե ազդեցիկ լինելու համար անհրաժեշտ է, որ այդ պատմությունը շարադրվի շնորհալի գրողի կողմից: Ես խոսեցի գրողների հետ, սակայն նրանք ինձ չընդառաջեցին: Այդ պատճառով է, որ որոշեցի ինքս գրել:

Չափոք – Անցյալ տարի Չայաստանի մի քանի քաղաքներում կազմակերպվեց «Մեծ մայրս» գրքի շնորհանդեսը: Ես գիտեմ, որ դա Ձեր առաջին այցն էր Չայաստան: Կարո՞ղ եք պատմել Ձեր տպավորությունների մասին:

Պատ.– Չայաստանն ինձ օտար չթվաց: Այնպիսի տպավորություն ունեի, կարծես իմ առաջին այցը չէր: Այս երկիրն ունի մարդուն պարուրող ջերմություն, պարզություն եւ մաքրություն: Շատ նման է իմ ծննդավայրին, փողոցներում քայլելիս ինձ զգում էի այն վայրերում, որտեղ անցել է մանկությունս: Մարդիկ շատ ջերմ են, անկեղծ եւ հյուրընկալ: Արժանացա մտերիմ, ջերմ ուշադրության, սակայն միեւնույն ժամանակ այն թախիծը, որ կար մարդկանց հարցական, հասկանալ ձգտող հայացքներում, ինձ վրա մեծ ազդեցություն թողեց: Չայաստանում շատ լավ բարեկամներ ծեռք բերեցի: Այս ուղեւորությունն էլ ավելի ամրապնդեց պայքարելու հաստատակամությունս եւ վճռակամությունս: Ամենակարեւորն այն է, որ Չայաստանում ծանոթացա իմ ընտանիքի նոր անդամների հետ: Նրանց հետ անցկացրած ջերմ ժամերը երբեք չեն մոռանա¹:

Չափոք – Ձեր գիրքը թուրքիայում բռնի իսլամացված հայերի խնդրի ակտուալացման գործում մեծ դեր խաղաց. թեմայի մասին, որն ավելի վաղ ընկալվում էր որպես թաքու, սկսեցին խոսել, քննարկել: Ընդհանրապես կուզենայի իմանալ այս խնդրին Ձեր մոտեցումը:

Պատ.– Այո, գիրքը մի խումբ մարդկանց մեջ կենդանացրեց ճնշումների քաղաքականության հետեւանքով՝ ժամանակի ընթացքում գրեթե մոռացված, մոխրացած հուշերն ու հիշողությունները: Այս մարդիկ սկսեցին հիշել իրենց տատերի եւ պապերի պատմածները: Մարդկանց մեկ այլ խմբի համար, որը չգիտեր, թե ինչեր են տեղի ունեցել 1915-ին կամ էլ պաշտոնական տեսակետին էր հավատում, գիրքը լուրջ բեկման պատճառ դարձավ: Նրանք սկսեցին հարցականի տակ դնել պաշտոնական տեսակետը, ուսումնասիրել իրենց ընտանիքների պատմությունները: Գրողները եւ գիտնականները կարծիք են հայտնել, թե «Մեծ մայրս» գիրքը 1915-ին տեղի ունեցածի մասին հարցեր տալու ցանկություն եւ հետաքրքրություն է արթնացրել:

Չարք – Իմ կարծիքով՝ Թուրքիայում իսլամացված հայերին եւ նրանց սերունդներին մի քանի պայմանական խմբի կարող ենք բաժանել. ծայտյալ հայեր, իսլամացված հայեր, հայության հետ իրենց բոլոր կապերը կորցրած հայերի սերունդներ, խառնածիններ եւ այլն: Դուք այս տեսակետին ինչպե՞ս եք մոտենում:

Պատ. – Իմ կարդացածի եւ դիտարկումների համաձայն՝ որոշ վայրերում բնակվող հայերը ճնշումների պատճառով եւ ապրելու բնագոյով (1915-ից առաջ) զանգվածաբար կամ էլ առանձին կրոնափոխ են եղել: Օրինակ, կան դեպքեր, երբ ամբողջ գյուղի բնակչությունը զանգվածաբար կրոնափոխ է եղել: Այս հատվածն ընդհանրապես նախընտրել է ալեւիականությունը: Այս խմբից զատ, 1915-ի ընթացքում մեծ թվով հայ կանայք եւ երեխաներ տարբեր պատճառներով իսլամացվել են: Մեկ էլ, ինչպես դուք անդրադարձաք, 1915-ին այս տարածքներում մնացած եւ իրենց կյանքը շարունակող որոշ ընտանիքներ արտաքուստ մուսուլման են, կրում են թուրքական կամ մուսուլմանական անուններ, սակայն գաղտնի շարունակում են իրենց սովորույթները եւ պահում իրենց լեզուն. ահա այդ մարդիկ էլ կոչվում են ծայտյալ հայեր: Պարզվում է՝ այս խումբը մերձավորների միջեւ ամուսնություններով (ներքին ամուսնություններ), ինչը թեւեւ հակասում է իրենց սովորույթներին, պահպանել է էթնիկ եւ կրոնական պատկանելությունը:

Չարք – Էթնիկ ինքնության խնդիրն, իմ կարծիքով, Թուրքիայում ամենակարեւոր եւ նուրբ թեմաներից մեկն է: Այն ժամանակ առ ժամանակ գիտական, անգամ քաղաքական օրակարգ է մտնում: ԵՄ-ին անդամակցել ձգտող Թուրքիայում որոշ մարդիկ դեռեւս ստիպված են թաքցնել իրենց իրական էթնիկ ինքնությունը, սրան ինչպե՞ս եք վերաբերվում:

Պատ. – Թուրքիայում վերջին ժամանակներս փոփոխությունների եւ ստատուս քվոյի միջեւ կենաց-մահու պայքար է ընթանում: Փոփոխությունը դժվար է, սակայն փոփոխության ուղղությունը մեզ հույս է տալիս: Պաշտոնական քաղաքականությունը, որը մինչեւ երեկ ասում էր՝ քուրդ չկա, արգելում էր քրդերենը, այսօր քրդերենով հեռարձակվող հեռուստաալիք է բացում: Վարչապետը քրդերեն նախադասություն է ասում, նախագահն ասում է՝ «տարբերությունները մեր հարստությունն են»: Որքան էլ դիմադրությունն ուժեղ լինի, սակայն հասկանալի է, որ փոփոխությունը լավ կետի է հասնելու:

Չարք – Իսլամացված հայերի խնդրի հետ կապված՝ առկա են նաեւ շահարկումներ. որոշ գիտնականներ, քաղաքական գործիչներ խնդիրը սպառնալիք են համարում:

Պատ.– Կա մի «պետական սովորույթ», որը մարդկանց էթնիկ արմատները քննարկման է դնում, որոշ էթնիկ խմբերի համարում է սպառնալիք եւ խոչընդոտում է այդ մարդկանց կարելու պաշտոններ զբաղեցնելուն: Այս սովորույթը ներկայումս թեւ շարունակվում է, սակայն գոնե վերջին ժամանակներս Թուրքիայում դրա դեմ հասարակական կարծիք է ձեւավորվում: Օրինակ, Ժողովրդա-հանրապետական կուսակցության պատգամավոր Ջանան Արըթմանի խոսքերը նախագահ Աբդուլա Գյուլի էթնիկ ծագման մասին խստորեն քննադատվեցին եւ ՋԼՍ-ում, եւ նույնիսկ իր կուսակցությունում:

Յարգ– Յայերի համար քրիստոնեության դերը բավական մեծ է: Տարածված մի կարծիքի համաձայն՝ իսկական հայը պետք է քրիստոնյա լինի, նույն այդ մոտեցման պատճառով այլակրոն կամ իսլամ ընդունած հային որպես իրական հայ ընդունելը մեզ համար փոքր-ինչ դժվար է: Դուք հ՞նչ դիրքորոշում ունեք էթնիկ եւ կրոնական ինքնությունների մասին:

Պատ.– Ես հավատում եմ, որ անձի էթնիկ կամ էլ կրոնական ինքնության հարցում որոշում կարող է կայացնել միայն տվյալ անձը: Ինքնության եւ պատկանելության ոլորտը, իմ կարծիքով, պետք է ցանկացած ճնշումից, ուղղորդումից ազատ լինի: Անձը պետք է ազատ լինի ինքն իրեն ներկայացնելու հարցում, իսկ մեզ մնում է ընդունել նրա նախապատվությունը: Այս խնդրում ես միայն իմ անձնական ինքնության եւ պատկանելության վերաբերյալ կարող եմ կարծիք ունենալ: Ուստի մտածում եմ, որ ինքնությունների առաջնայնությունը եւ հիերարխիկ դասակարգումը ոչ մեկի որոշելիքը չէ:

Յարգ– Յայտնի է, որ Թուրքիայում Ձեզ նման խառնածիններ բավական շատ են, սակայն նրանց շրջանում զարգացումները, այնուամենայնիվ, տարբեր են. մի մասը կարելու է հայկական արմատները, փնտրում դրանք, մի մասը բացարձակ չի կարելու, մի մասն էլ հայերի հանդեպ ծայրահեղական դիրքորոշում է որդեգրում, հայերին ընկալում որպես թշնամի: Թուրքական աղբյուրները նշում են, որ նույնիսկ ազգայնամուլների շրջանում կան հայկական ծագում ունեցողներ: Դուք այս ամենը, այսինքն՝ արմատների կարելու մասին կամ ժխտումը, ինչպե՞ս կարող եք բացատրել:

Պատ.– Եթե մարդիկ ճշման, սպառնալիքի եւ մեկուսացման վախից իրենց արմատները, էթնիկ կամ կրոնական ինքնությունները թաքցնում են կամ էլ մեկուսացման վտանգից ելնելով՝ ձգտում են ապացուցել, թե պատկանում են մեծամասնությանը, ապա ստեղծված նման մթնոլորտը

հակասում է համաշխարհային արժեքներին, մարդու իրավունքներին, ժողովրդավարությանը եւ բնությանը: Այդ մթնոլորտը հնարավոր չէ պաշտպանել ոչ էթիկայի եւ ոչ էլ իրավական առումներով: Ծնշմամբ, սպառնալիքով եւ վախով իրենց արմատները ժխտելը, թաքցնելը ամեն ինչից առաջ մարդկային չէ:

Չարք – Ձեր տատի նման հազարավոր մարդիկ այս դառը եւ տրավմատիկ դեպքերի հիշողությունը թաքցրել են իրենց հոգում եւ հարմար մի օր սկսել են զգալ այդ ամենը մեկի հետ կիսելու կարիքը. Ձեր կարծիքով՝ մարդու ինքնության մեջ որքանո՞վ է կարելու տրավմատիկ հիշողության դերը:

Պատ. – Իմ կարծիքով՝ տրավմատիկ դեպքերի հիշողությունը հաղթահարելու առաջին քայլը դրանց մասին խոսել կարողանալն է: Տրավմայի հետ առերեսվելու եւ դրանից ազատվելու համար անհրաժեշտ է խոսել այն առաջացրած դեպքերի, դառը հիշողությունների մասին: Այդ պատճառով շատ կարելու է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ տրավմայի ենթարկված անձը կկարողանա հանգիստ խոսել:

Չարք – Էթնիկ ծագումը կարո՞ղ է պատճառ լինել, որպեսզի պետությունն իր քաղաքացիների հանդեպ որդեգրի տարբերակված մոտեցում: Դուք՝ որպես իրավաբան, սրան ինչպե՞ս եք վերաբերվում:

Պատ. – Ըստ համաշխարհային իրավական սկզբունքների, պետությունները պարտավոր են իրենց քաղաքացիների նկատմամբ հավասար վերաբերմունք ունենալ եւ խտրականություն չղնել: Հավասարության սկզբունքը եւ խտրականության արգելքը միջազգային իրավունքի անբակտելի սկզբունքներից են: Եվ էթնիկ ծագումը մարդկանց հանդեպ չի կարելի որպես բացասական փաստարկ կիրառել:

Չարք – Մենք Ձեզ ճանաչում ենք նաեւ որպես Հրանտ Դինքի փաստաբան. Դինքի գործի վերջին զարգացումների մասին ի՞նչ կարող եք ասել:

Պատ. – Հրանտ Դինքի սպանության գործով այսօր, երկու տարի առաջվա համեմատ, հիշատակման արժանի ոչ մի զարգացում չկա, որովհետեւ Դինքի սպանությունը մի ամբողջություն է, որտեղ ընդգրկված են սպանության նախապատրաստական փուլը, Դինքին որպես թիրախ ներկայացնելը, սպանության դրդումը, այս գործընթացում անվտանգության ուժերի ունեցած դերը, մարդասպանի պատրաստումը եւ սպանության իրականացումը: Սակայն այս ամբողջությունն այսօր բաժանվել է

մասերի, եւ կտրվել է ամբողջի հետ կապը: Այս հանգամանքը խոչընդոտում է նաեւ հետաքննությանը՝ տեսնել գործընթացն ամբողջությամբ: Քանի դեռ սպանության նախապատրաստական փուլը, սպանությունը եւ դրան հետեւած իրադարձությունները չգնահատվեն որպես մեկ ամբողջություն եւ ըստ այդմ չտարվի հետաքննությունը, Հրանտ Դինքի սպանության գործում արդյունքի հասնել հնարավոր չէ:

Հարց – Որքան տեղյակ եմ, Ղուք ծրագրել եք իսլամացված հայերի թեմայով եւս մեկ գիրք գրել: Իմանալով նաեւ, որ խիստ բազմազբաղ եք, այնուամենայնիվ, ցանկանում եմ հարցնել, թե երբ այն պատրաստ կլինի:

Պատ. – Այո, նման միտք ունեմ եւ ցանկանում եմ ամենակարճ ժամանակում ավարտել այդ աշխատանքը:

Հարց – Շնորհակալություն հարցագրույցի համար եւ հուսով եմ, որ նոր գրքի հրատարակումից հետո նորից հնարավորություն կունենանք Ձեզ հետ հանդիպել Հայաստանում:

Պատ. – Ես եմ շնորհակալություն հայտնում եւ հույս ունեմ, որ ամենակարճ ժամկետում կրկին կհանդիպենք:

*Զրույցը վարեց
Ռուբեն Մելքոնյանը*

¹ «Մեծ մայրս» գրքի հերոսուհին՝ Հերանուշ Կատարյանը (Ֆեթիյե Չեթինի տատը), ունեցել է երկու եղբայր՝ Խորենը եւ Հրայրը: Խորենին աքսորի ճամփին իր քրոջ նման խլում է մի մուսուլման, որը հետո նրան իսլամացնում է՝ տալով Ահմեթ անունը, իսկ փոքր եղբայրը՝ Հրայրը, ըստ Հերանուշի մոր պատմածների, մահանում է աքսորի ճամփին: Գրքի արեւելահայերեն հրատարակումից հետո ինձ այցելեց Ջոն Կադարյան անունով մի անձնավորություն, որը պատմեց եւ այնուհետեւ տարբեր փաստերով հաստատեց, որ ինքը մահացած համարված Հրայր Կատարյանի թոռն է: Չեթինի հայաստանյան այցի ժամանակ ես հանդիպեցրի նրանց: Համադրելով իրենց իմացած փաստերը, նկարները, պատմությունները եւ անգամ ժառանգական հատկանիշները՝ էլ ավելի հաստատ դարձավ, որ Հրայր Կատարյանն իրականում չի մահացել, այլ հրաշքով փրկվելով՝ հայտնվել է որբանոցում, այնտեղից էլ տեղափոխվել Վրաստան: Այս խիստ հետաքրքիր պատմությունը միգուցե դառնա Ֆեթիյե Չեթինի հաջորդ գրքերի սյուժեներից մեկը (*Ռ.Մ.*):

ՋԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ

Սեւակ Սարուխանյան

Իրանում եւ նրա շուրջ ընթացող քաղաքական եւ միջազգային զարգացումները վերջին շրջանում կապված են հիմնականում երկու կարեւոր գործոնների հետ: Դրանք են՝ գալիք նախագահական ընտրությունները եւ Իրանի նկատմամբ ամերիկյան նոր վարչակազմի դեռեւս ձեւավորվող քաղաքականությունը: Միեւնույն ժամանակ, նկատելի են որոշակի զարգացումներ «միջուկային հիմնախնդրի» ուղղությամբ՝ հաշվի առնելով Իրան – «վեցնյակ» բանակցությունների վերսկսումը:

Նախագահական ընտրություններ

Մարտ ամսին Իրանի ներքաղաքական կյանքում գլխավոր նորությունն ու զարգացումը կարելի է համարել նախկին վարչապետ Մ.Մուսավիի հայտարարությունն այն մասին, որ նա պատրաստվում է մասնակցել գալիք նախագահական ընտրություններին: Իրանի նախկին նախագահ Մ.Խաթամին, իր խոստումի համաձայն, Մ.Մուսավիի առաջադրվելուց հետո հայտարարեց, որ հրաժարվում է գալիք պայքարից եւ աջակցելու է նախկին վարչապետի թեկնածությանը:

Դժվար է ասել, թե ինչ հունով կընթանա նախընտրական պայքարն Իրանում եւ ով ընտրությունների արդյունքում կստանա ընտրողների մեծամասնության աջակցությունը: Մ.Մուսավիին առավելապես ստվերում գտնվող քաղաքական գործիչ է եւ իրանական հասարակության շրջանում, որի մեծ մասը երիտասարդներ են, մեծ ճանաչում չունի: Սակայն պատմությունը ցույց է տալիս, որ գրեթե նույնպիսի պայմաններում 1997թ. հաղթանակել է Մ.Խաթամին:

Բարդ քաղաքական եւ տնտեսական զարգացումներ ապրող մերօրյա Իրանում, միզուցե, Մ.Մուսավիի նման նոր, սակայն միեւնույն ժամանակ բավական փորձված քաղաքական գործչի հրապարակ գալը կարող է հասարակական աջակցություն ստանալ: Իրանա-իրաքյան պատերազմի եւ իսլամական հեղափոխության «հաղթարշավի» տարիներին վարչապետ եղած, սակայն այսօր այսպես կոչված «բարեփոխիչների» ճամբարը ներկայացնող Մ.Մուսավիին կարող է զբաղեցնել իրանական քաղաքական դաշտի «կենտրոնը»:

«Բարեփոխիչներ-պահպանողականներ» երկրեւեռ քաղաքական պայքարի մոդելն Իրանում այսօր չունի այն այժմեականությունը, որն ուներ տասը կամ հինգ տարի առաջ. երկու տարբեր ճամբարներ ներկայացնող Մ.Խաթամին եւ Մ.Ահմադինեժադը, չնայած իրենց իշխանության տարիներին ունեցած որոշ հաջողություններին, իշխանության վերջին տարիներին արձանագրել են իրենց, ինչպես նաեւ իրենց պաշտպանող քաղաքական ուժերի նկատմամբ հասարակության վստահության անկում: Այս տեսանկյունից, հնի եւ նորի միջեւ գտնվող Մ.Մուսավին կարող է բավական հմայիչ եւ վստահելի թվալ իրանցիների համար: Հատկանշական է, որ իրանական գրեթե բոլոր քաղաքական ուժերը դրական են արձագանքել նախկին վարչապետի որոշմանը՝ մասնակցել գալիք ընտրություններին: Միաժամանակ, այս ընտրությունների ընթացքի վրա մեծ ազդեցություն կարող է ունենալ իրանա-ամերիկյան երկխոսությունը:

Իրան – ԱՄՆ

Գրեթե բոլոր միջազգային լրատվամիջոցներն անդրադարձել են Նոուրուզի կապակցությամբ Իրանի ժողովրդին ԱՄՆ նախագահ Բ.Օբամայի վիդեո-ուղերժին, որը գնահատվել է հիմնականում որպես քայլ՝ ուղղված Իրան–ԱՄՆ երկխոսության աջակցությանը: Միեւնույն ժամանակ, «Մեծ քսանյակի» եւ Ռուսաստանի նախագահի հետ հանդիպումների ժամանակ ԱՄՆ նախագահի հայտարարությունը, թե ԱՄՆ Հակահրթիռային պաշտպանության համակարգը ստեղծվում է հիմնականում Իրանի եւ Հյուսիսային Կորեայի կողմից հնարավոր հարձակումը կանխարգելելու նպատակով, ցույց է տալիս, որ երկխոսությունն, այնուամենայնիվ, ընթանում է ոչ միանշանակ ուղղությամբ: Կարելի է ենթադրել, որ ի տարբերություն իրաքյան հիմնախնդրի շուրջ իրանա-ամերիկյան անցած տարիների բանակցությունների, որոնք անցել էին Բաղդադում, այսօր երկխոսության եւ բանակցությունների առարկան ավելի գլոբալ է եւ ռազմավարական, իսկ բանակցային գործընթացի մեջ է մտել, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, նաեւ իսրայելական կողմը: Այս մասին կարող է վկայել այն, որ Նոուրուզի կապակցությամբ Իրանի ժողովրդին բավական «խաղաղասեր» շնորհավորական ուղերձ հղեց նաեւ Իսրայելի նախագահ Շ.Պերեսը, ով իսրայելցիների եւ իրանցիների հարաբերությունների հույս եւ բարեմաղթանք հայտնեց: Միեւնույն ժամանակ, մարտի 29-ին լիբանանյան «Ալ-Լավա» թերթը հրատարակեց տեղեկատվություն, որ վերջին օրերի ընթացքում Բեյրութում՝ սկզբում ամերիկյան, իսկ հետո նաեւ իրանական դեսպանատների տարածքում ընթացել են գաղտնի իրանա-ամերիկյան

բանակցություններ՝ նվիրված միջպետական հարաբերությունների կարգավորմանը:

Բեյրութի, այլ ոչ թե Բաղդադի կամ Իսլամաբադի ընտրությունը, թերևս, պայմանավորված կարող է լինել արաբա-իսրայելական խնդրի՝ որպես բանակցությունների հիմնական թեմաներից մեկի առկայությամբ:

Ապրիլի 8-ին Իրանի նախագահ Մ.Ահմադինեժադը Սպահանում հայտարարեց, որ Իրանը «հիարկե, սեղմելու է իրեն մեկնված ձեռքը»՝ նկատի ունենալով Բ.Օբամայի շնորհավորանքը եւ կոչը: Սակայն նշեց, որ եթե այն անկեղծ չլինի, ապա Բ.Օբաման կստանա նույն պատասխանը, ինչ եւ ստացել էր Ջ.Բուշը:

Բուն ԱՄՆ-ում իրանական խնդրի շուրջ զարգացումները նույնպես բավական հետաքրքիր են: Առաջին հերթին, աչքի է ընկնում ԱՄՆ փոխնախագահ Ջ.Բայդենի ապրիլի 7-ին արած հայտարարությունն այն մասին, որ նա չի հավատում, թե Իսրայելի նոր վարչապետ Բ.Նաթանյահուն կիրանայի օդային հարված հասցնել Իրանի միջուկային ենթակառուցվածքին, եւ նրան նման առաջարկներ անելը՝ «խորհուրդ է հիվանդների կողմից»: Սա ամերիկյան ղեկավարության՝ այսպիսի բարձր մակարդակով արտահայտված, կարելի է ասել, առաջին հայտարարությունն է, որը բացառում եւ քննադատում է Իրանի դեմ ռազմական գործողության իրականացումը:

Սակայն, չնայած Ջ.Բայդենի այս հայտարարությանը, ամերիկյան Պետական դեպարտամենտում նկատելի է «իրանամետ» աշխատակիցների հեռացում: Աֆղանստանի եւ Պակիստանի հարցերով հատուկ ներկայացուցիչ Ռ.Յոլդերուքի եւ Պարսից ծոցի գծով հատուկ ներկայացուցիչ Դ.Ռոսի իրամաններով՝ Պետդեպարտամենտի համապատասխան վարչությունների գլխավոր փորձագետների պաշտոններից մարտի վերջին եւ ապրիլի սկզբին ազատվեցին Իրանի հարցերով պատասխանատուներ Վ.Նասրը եւ Ռ.Թաքեյը՝ երկու բավական հայտնի եւ հեղինակավոր վերլուծաբաններ, որոնք վերջին տարիներին հանդես են եկել Իրանի հետ հարաբերությունների կարգավորման անհրաժեշտության դիրքորոշմամբ, մշակել հարաբերությունների զարգացման ռազմավարական նշանակության փաստաթղթեր:

Ջ.Բայդենի հայտարարությունը եւ Պետական դեպարտամենտում տեղ գտած կադրային փոփոխությունները, հավանաբար, վկայում են այն մասին, որ ԱՄՆ իշխանական վերնախավի տարբեր թեւերի միջեւ, այնուամենայնիվ, դեռեւս չկա վերջնական մշակում ստացած «իրանական քաղաքականություն»: Այն հավանաբար կծեւավորվի Իրանում նախագահական ընտրություններից հետո, երբ պարզ կլինի՝ պահպանելու է

արդյոք Մ.Ահմադինեժադն իր աթոռը, թե՞ ոչ: Իսկ ներկայումս ընթացող բանակցություններն ու կապերը ստեղծում են այն հողը, որի վրա կընթանա իրական երկխոսությունը, եթե այն, այնուամենայնիվ լինի:

Միջուկային հիմնախնդիր

Առաջիկա երկու ամիսներին կարելի է ակնկալել նաեւ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ընթացող բանակցությունների ակտիվացում, որը պայմանավորված կլինի այսպես կոչված «վեցնյակի» (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Չինաստան)՝ Իրանին արվելիք նոր առաջարկությամբ: Առաջարկության փաթեթն, ըստ լրատվամիջոցների, արդեն պատրաստ է եւ մոտակա շրջանում դառնալու է բանակցությունների առարկա: Իրանը պաշտոնապես համաձայնել է քննարկել այն, սակայն դեռեւս կոնկրետ տեղեկատվություն չկա այն մասին, թե ինչ է «վեցնյակի» առաջարկությունների այս փաթեթը:

Բուն «վեցնյակի» ներսում տարաձայնությունները բավական շատ են: Ռուսաստանը եւ Չինաստանը շարունակում են հանդես գալ նախկին «իրանամետ» դիրքերից, սակայն ամենից մեծ անակնկալը կապված է Գերմանիայի հետ: Մարտի վերջին Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ֆ.Շտայնմայերը գերմանական խորհրդարան (Բունդեսթագ) օրինագիծ մտցրեց, համաձայն որի Գերմանիան պատժամիջոցներ պետք է կիրառի Իրանի նկատմամբ՝ կապված վերջինիս միջուկային ծրագրի հետ: Սակայն ապրիլի 6-ին Բունդեսթագի բոլոր հանձնաժողովները բացասական եզրակացություն տվեցին օրինագծին, իսկ վարչապետ Ա.Մերկելի քրիստոնեա-դեմոկրատական միության քարտուղարը հայտարարեց, թե իրենք թույլ չեն տա, որ մնան օրենք ընդունվի: Նույնպիսի հայտարարությամբ հանդես եկան նաեւ «կանաչները», որոնք պատժամիջոցները բնութագրեցին «անհիմն եւ վտանգավոր»:

Համաշխարհային ներկա ճգնաժամի պայմաններում՝ կարելի է սպասել, որ արեւմտյան երկրների ճնշումն Իրանի վրա որոշակիորեն կթուլանա, քանի որ պատժամիջոցները, ապրանքաշրջանառության անկումը եւ, որպես պատժամիջոցներից ուղղված հակաքայլ, Իրանի կողմից Քիշ կղզում սեփական նավթային բորսայի բացումն ու նավթի՝ եվրոյով վաճառքի կազմակերպումը կարող են նոր հարված հասցնել համաշխարհային տնտեսական անվտանգությանը:

ՉԻՆԱՍՏԱՆ–ՊԱԿԻՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾ ԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ Աղավնի Հարությունյան

Չինաստանը եւ Պակիստանը թեւեւ հակադիր գաղափարախոսություններ եւ տարբեր տնտեսական համակարգեր ունեցող երկրներ են, նրանց հարաբերություններն ընդհանուր առմամբ բարեկամական բնույթ են կրել՝ ինչպես սառըպատերազմյան երկրբեւեռ, այնպես էլ հետսառըպատերազմյան՝ միաբեւեռ աշխարհակարգերում: Պակիստանի իսլամական հանրապետությունն առաջին երկրներից էր, որը ճանաչելով ՉԺՀ-ն իբրեւ Չինաստանի միակ օրինական կառավարություն՝ 1951թ. մայիսի 21-ին դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Պեկինի հետ: Դիվանագիտական հարաբերությունների հաստատման առաջին տասնամյակին երկու երկրների միջեւ հարաբերություններն աչքի չէին ընկնում հատուկ ջերմությամբ՝ կապված հակադիր ռազմաքաղաքական դաշինքներում ընդգրկված լինելու հանգամանքի հետ: Սակայն հետագայում՝ Մոսկվայի ու Պեկինի միջեւ առաջացած տարածայնությունները, ինչպես նաեւ Հնդկաստանի նկատմամբ Պեկինի ու Իսլամաբադի ունեցած տարածքային հավակնությունները վերջիններիս միջեւ ռազմավարական դաշինքի ձեւավորման պատճառ դարձան:

Սառը պատերազմի ավարտից հետո Պակիստանը կորցրեց իր կարեւորությունն ԱՄՆ-ի համար, որը դադարեցրեց ռազմաքաղաքական եւ տնտեսական օգնության տրամադրումն Իսլամաբադին: Արդյունքում՝ 1990–2001թթ. Չինաստանը դարձավ Պակիստանի զինված ուժերի արդիականացմանը սատարող միակ տերությունը: Իսկ 1990-ականների սկզբներին Արեւմուտքին դիմակայելու, Թուրքիայի ու Ռուսաստանի ազդեցությունը Կենտրոնական Ասիայում սահմանափակելու, ինչպես նաեւ տարածաշրջանում Հնդկաստանի աճը կասեցնելու նպատակով Պակիստանի, Իրանի եւ Չինաստանի միջեւ դե-ֆակտո «ռազմավարական դաշինք» ձեւավորվեց:

2005թ. Չինաստանն ու Պակիստանը ստորագրեցին բարեկամության, համագործակցության, բարիդրացիական հարաբերությունների վերաբերյալ պայմանագիր, որն ամրագրում է երկու պետությունների ռազմավարական գործընկերության կարեւորագույն ուղղությունները:

Համագործակցությունը ներքաղաքական և միջազգային հիմնախնդիրների շուրջ

Իսլամաբադի դիրքորոշումը համապատասխանում է Տիբեթի և Թայվանի կարգավիճակի, մարդու իրավունքների հարցում ՉԺՀ պաշտոնական դիրքորոշման հետ: Պակիստանն առաջին երկիրն էր, որը հանդես եկավ ՉԺՀ Ազգային ժողովրդական կոնգրեսի կողմից 2005թ. մարտին ընդունված չբաժանման օրենքի պաշտպանությամբ¹: Իսլամաբադը պաշտոնապես ողջունում է ՉԺՀ աճող ազդեցությունը Հարավային Ասիայում և նրա հարաբերությունները Հնդկաստանի հետ՝ դրանք գնահատելով խաղաղությանը, կայունությանն ու առաջընթացին ուղղված քայլ:

1900-ականների երկրորդ կեսից ՉԺՀ-ն, Հնդկաստանի հետ հարաբերությունների բարելավման հողի վրա, ոչ միանշանակ դիրքորոշում է գրավում Պակիստանի համար միանգամայն զգայուն՝ Քաշմիրի հիմնախնդրի նկատմամբ և հանդես չի գալիս հակամարտող որեւէ կողմի պաշտպանությամբ: Պեկինը պաշտպանում է հնդկա-պակիստանյան հակամարտությունը «փոխադարձ երկխոսության» և «երկկողմ քայլերի» միջոցով կարգավորելու օգտին: Նշենք, որ հակամարտությունը և վերջինիս հետեւանքով տարածաշրջանի ապակայունացման հնարավորությունը Պեկինին մտահոգում է հատկապես Հարավային և Կենտրոնական Ասիայում ամերիկյան ներկայության աճի տեսանկյունից:

ՉԺՀ և Պակիստանի դիրքորոշումը համընկնում է միջազգային մի շարք հիմնախնդիրներում: Երկու երկրներն էլ քննադատում են ԱՄՆ ներխուժումն Իրաք, հանդես են գալիս ՄԱԿ ԱԽ կազմը մշտական նոր անդամների (Հնդկաստանի) հաշվին ընդլայնելու դեմ: Տարածաշրջանում Հնդկաստանի ազդեցության սահմանափակման և միջինասիական երկրների հետ կապերի սերտացումը մատչելի դարձնելու հարցում Իսլամաբադը շահագրգիռ է Հարավային Ասիայի գործերին Պեկինի ակտիվ ներգրավվածության մեջ: Խոսքը մասնավորապես Հարավասիական տարածաշրջանային համագործակցության ասոցիացիայի (SAARC) և Շանհայի համագործակցության կազմակերպության (ՇՀԿ) մասին է, որոնցում փոխադարձ օգնությամբ երկու երկրները 2005թ. ստացել են դիտորդի կարգավիճակ: Իսլամաբադը մտադիր է ապահովել ՉԺՀ մշտական անդամակցությունը SAARC-ին՝ փոխարենը Պեկինի աջակցությունն ակնկալելով ՇՀԿ-ին Իսլամաբադի լիիրավ անդամակցության ապահով-

¹ Այդ օրենքի համաձայն՝ Չինաստանն իրեն իրավունք է վերապահում Թայվանի դեմ ռազմական գործողության դիմել, եթե վերջինս պաշտոնապես հանդես գա իր անկախության հռչակմամբ:

ման գործում: ՇՀԿ ընդլայնման որոշում ընդունվելու դեպքում Պեկինը չի հերքում նրա կազմ Յնդկաստանի եւ Պակիստանի միաժամանակյա ընդգրկման հնարավորությունը: Միեւնույն ժամանակ, հնդկա-պակիստանյան հակասությունների տեղափոխումը ՇՀԿ հարթություն սպառնալիք է դիտվում կազմակերպության գոյությանը՝ հաշվի առնելով վերջինիս որոշումները փոխզիջման հիման վրա ընդունելու փաստը:

Իսլամաբադն ու Պեկինը համագործակցում են նաեւ Ասիական տարածաշրջանային ֆորումի, ինչպես նաեւ Ասիայի Բոաո ֆորումի շրջանակներում, որը մեկ այլ հարթություն է ասիական տնտեսական հիմնախնդիրներն առավել լայն հեռանկարով քննարկելու համար:

Ռազմատեխնիկական եւ անվտանգության ոլորտ

Երկու երկրների միջեւ ռազմական համագործակցությունն ամրագրվել է 2006թ. կողմերի միջեւ ռազմատեխնիկական գործակցության եւ ռազմական օգնության վերաբերյալ երկու համաձայնագրի ստորագրմամբ: Պեկինն օգնություն է ցուցաբերում Պակիստանի զինված ուժերի արդիականացման գործընթացին՝ տարբեր զինատեսակների ձեռքբերման նպատակով ամենամյա անտոկոս վարկեր տրամադրելով վերջինիս: Երկրի ռազմաօդային ու ռազմածովային ուժերը, ցամաքային զորքերը գրեթե ամբողջությամբ հանդերձավորված են ՉԺՅ տեխնիկայով:

1980-ականներին Պակիստանի միջուկային ծրագրի իրականացման ուղղությամբ ՉԺՅ ցուցաբերած տեխնիկական աջակցության շնորհիվ Իսլամաբադը մեծ առաջընթաց է ապահովել միջուկային զենքի ստեղծման, ինչպես նաեւ ԱԵՄԳ երաշխիքների ներքո խաղաղատոմի զարգացման ոլորտում: Պեկինի ու Իսլամաբադի համատեղ ջանքերով 1999-ից Պակիստանում կառուցվել են ատոմային էլեկտրակայանի 300.000 կվտ հզորությամբ երկու էներգաբլոկեր: 2006թ. ՉԺՅ-ն պարտավորվել է 300 մվտ հզորությամբ միջուկային 6 ռեակտոր (7 մլրդ ԱՄՆ դոլար արժողությամբ) տրամադրել Պակիստանին:

Նշենք, որ ԱՄՆ-ը ակնհայտորեն չի ողջունում Իսլամաբադի եւ Պեկինի միջեւ նշյալ ոլորտում համագործակցությունը եւ ձգտում է ազդել ՉԺՅ-ի վրա՝ օգտագործելով Միջուկային մատակարարների խմբի (ՄՄԽ) վրա ունեցած լծակները: Սակայն Պեկինը կարող է շրջանցել ՄՄԽ ճնշումները՝ հիմք ընդունելով միջուկային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման վերաբերյալ Իսլամաբադի հետ դեռեւս 1986թ. (այսինքն՝ նախքան ՄՄԽ խմբի ստեղծումը) ստորագրված պայմանագիրը:

Չնայած այն փաստին, որ առաջիկա տարիներին Պակիստանի ռազմական շուկայում զենքի մատակարարների (որտեղ «առաջին ջութակի»

դերը պատկանում է ՉԺՀ-ին) հետ կապված արմատական փոփոխություններ չեն ակնկալվում, այնուհանդերձ, Իսլամաբադը սկսում է միջոցներ ձեռնարկել զենքի մատակարարման աղբյուրների տարրորոշման ուղղությամբ: Դրան նպաստում է Արեւմուտքի կողմից Պակիստանի նկատմամբ ռազմատեխնիկական աջակցության ոլորտում կիրառվող սահմանափակումների մեղմացումը՝ կապված 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո միջազգային իրավիճակի փոփոխության եւ ահաբեկչության դեմ պայքարում Իսլամաբադի հետ ռազմավարական գործընկերության անհրաժեշտության փաստի հետ:

Չին-պակիստանյան համագործակցությունը զարգանում է նաեւ տիեզերքի ուսումնասիրության ոլորտում՝ մասնավորապես 2005թ. հիմնադրված Ասիական-խաղաղօվկիանոսյան կազմակերպության (APSCO) շրջանակներում: Պեկինն ու Իսլամաբադը փորձում են համագործակցել Երկրագնդի պաշարների հետազոտման նպատակով 3 արբանյակի համատեղ բացթողման ուղղությամբ:

Մեծ նշանակություն է տրվում ահաբեկչության եւ թմրանյութերի տարածման դեմ պայքարում երկկողմ համագործակցությանը: ՉԺՀ-ն շահագրգռված է պակիստանյան ծայրահեղական կազմակերպությունների դեմ պաշտոնական Իսլամաբադի գործողությունների ակտիվացման հարցում՝ ելնելով Պակիստանում տարբեր նախագծերում ներգրավված իր քաղաքացիների պաշտպանության եւ իսլամական ծայրահեղականների ու արմատականների ներթափանցումը մեծ մասամբ մուսուլմաններով բնակեցված Սինցզյան-Ույղուրական ինքնավար մարզ կանխելու անհրաժեշտությունից:

Համագործակցությունը աշխարհաքաղաքական հիմնախնդիրների շուրջ

Աշխարհաքաղաքական իմաստով Պակիստանի բացառիկ նշանակությունը ՉԺՀ-ի համար պայմանավորվում է անկայուն Աֆղանստանի ու Հարավային Ասիայում տիրապետության ձգտող Հնդկաստանի հետ նրա հարեւանությամբ: Պակիստանի տարածքը ՉԺՀ-ի համար դեպի Հնդկական օվկիանոս եւ ածխաջրածնային պաշարներով հարուստ Պարսից ծոց տանող աշխարհագրական դարպաս է:

Երկու երկրների միջեւ համագործակցության խթանման գործում մեծ դեր է խաղում Պակիստանի տարածքը իբրեւ ՉԺՀ էներգետիկ պաշարների տեղափոխման համար տարանցիկ ուղի օգտագործման հանգամանքը: Խոսքը, մասնավորապես, արեւմտյան ՉԺՀ-ն Կարակորումի մայրուղով Արաբական ծովի պակիստանյան ափի հետ տրանսպորտային ու առեւտրային միջանցքով կապող Գվադարի նավահանգստի մասին:

Պեկինը, որի համար կենսական նշանակություն ունի էներգետիկ աղբյուրների կայուն ու անվտանգ ապահովման, ինչպես նաև դրանց տարրորոշման խնդիրը, օգնություն է ցուցաբերում 2006-ից գործող Գվադարի նավահանգստի կառուցման, ինչպես նաև Բելուջիստան նահանգի ենթակառուցվածքների զարգացման աշխատանքներին:

ՉԺՀ-ն Գվադարի նավահանգստի հետ կապող մեկ այլ նախագիծ է Թուրքմենստան-Աֆղանստան-Պակիստան գազամուղի կառուցումը (ՉԺՀ եւ Տաջիկստանի ընդգրկմամբ), որի ուղղությամբ աշխատանքներ են սկսել իրականացվել դեռևս 2008թ. փետրվարից: Նշենք նաև, որ Իրանի ու Յնդկաստանի միջև Պակիստանի տարածքով անցնող եւ երկու երկրների համար կենսական կարեւորություն ներկայացնող գազանավթային խողովակաշարը, հակառակ այդ ուղղությամբ ԱՄՆ բացասական վերաբերմունքին, եւս նախատեսվում է հասցնել մինչև ՉԺՀ:

Ուշագրավն այն է, որ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի պատճառով բավական ծանր կացության մեջ հայտնված Պակիստանի նոր նախագահ Ասիֆ Ալի Ջարդարին, ֆինանսական օգնության խնդրանքում ԱՄՆ-ում մերժում ստանալով, 2008թ. հոկտեմբերի կեսին բավական ջերմ ընդունելություն գտավ Պեկինում: Ենթադրվում է, որ ՉԺՀ-ն պատրաստ է Պակիստանին ֆինանսական օգնություն տրամադրել՝ Գվադարում չինական ռազմածովային ուժերի տեղակայման թույլտվության դիմաց: Սա կարող է հիմնովին փոխել աշխարհաքաղաքական իրադրությունը նույնիսկ Յարավասիական տարածաշրջանի շրջանակներից դուրս՝ հաշվի առնելով ՉԺՀ աճող ազդեցությունն ու գլոբալ մակարդակի վերաճող նրա հավակնությունները:

Անշուշտ, Պեկինը շահագրգռված է էներգետիկ աղբյուրների ներկրման ուղիների տարրորոշման հարցում, սակայն այդ ուղղությամբ ծրագրերի կենսագործումը միաժամանակ մտահոգում է նրան՝ միջուկային զենք ունեցող Պակիստանի դրության հնարավոր ապակայունացման տեսանկյունից (հատկապես, որ այդ զենքը կարող է հայտնվել Պակիստանում ռազմահանգրվաններ ունեցող իսլամական ծայրահեղական, ահաբեկչական խմբավորումների ձեռքում): Երկրի իրադրության վատթարացմանը նպաստող գործոններ են դիտվում Պակիստանի նոր նախագահի քաղաքական թուլությունը, թալիբների հանգրվան համարվող Վազիրիստան նահանգի նկատմամբ ամերիկյան օդային կանոնավոր գրոհները: Որպես օրենք՝ խաղաղ բնակիչների շրջանում զոհեր հարուցող Վաշինգտոնի գրոհները հակամերիկյան սուր տրամադրությունների առաջացման, թալիբների դիրքերի ամրապնդման եւ նախագահ Ջարդարի դիրքերի խարխլման հիմք են ծառայում. նախագահը սկսում է Վաշինգտոնի անզոր դրածոյի տպավորություն թողնել:

Ավելին, եթե մինչ այժմ Իսլամաբադը համարվում էր միջազգային

ահաբեկչության դեմ պայքարում Վաշինգտոնի կարեւորագույն դաշնակիցը, ապա ներկայումս ԱՄՆ-ը հարկադրված է «նկատել» ահաբեկչության դեմ պայքարում իր իսկ «դաշնակցի»՝ այդ ահաբեկչության կարեւորագույն հենարան հանդիսանալու փաստը: Մինչդեռ Իսլամաբադի վրա ճնշումն ուժեղացնելու դեպքում վերջինս հակվում է դեպի Պեկին: Դրան նպաստում է նաեւ վերջին տարիներին Պակիստանի գլխավոր հակառակորդի՝ Յնդկաստանի հետ ԱՄՆ մերձեցման փաստը, որի ակնհայտ դրսեւորումներից էր Վաշինգտոնի եւ Դելիի միջեւ իրականացված «միջուկային գործարքը»: Չի բացառվում, որ ԱՄՆ–Յնդկաստան առավել մերձեցմանը նպաստող մեկ այլ գործոն կարող է դառնալ Պեկինի կողմից Պակիստանի արաբական ծովափին ռազմածովային հանգրվանի ձեռքբերման հնարավորությունը:

ԱՄՆ–Յնդկաստան կապերը զարգանում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ մասշտաբներով. այս ամենը ցավագին է ընկալվում Իսլամաբադում, հատկապես այն բանից հետո, երբ 2006թ. մարտի շրջագայության ժամանակ ԱՄՆ նախագահը տարրորոշված մոտեցում դրսեւորեց Իսլամաբադի եւ Դելիի նկատմամբ՝ հրաժարվելով Պակիստանի հետ միջուկային ուլորտում պայմանագրի կնքումից:

Ինչ վերաբերում է ԱՄՆ–Յնդկաստան մերձեցման հանդեպ Պեկինի վերաբերմունքին, ապա վերջինս, այն գնահատելով Չինաստանի «զսպմանն» ուղղված քայլ, տարածաշրջանում Յնդկաստանի ազդեցությունը սահմանափակելու եւ Դելիին միաժամանակ երկու ճակատով լարվածության մեջ պահելու նպատակով՝ ռազմաքաղաքական ակտիվ աջակցություն է ցուցաբերում Պակիստանին: Այս առումով, անհիմն չեն թվում չին-հնդկական հնարավոր բախման դեպքում ՉԺՅ օգտին Պակիստանի հանդես գալու շուրջ ենթադրությունները:

Ուշագրավն այն է, որ եթե առավել քան կես դար, նույնիսկ Պեկինի ու Վաշինգտոնի միջեւ խիստ թշնամական հարաբերությունների պայմաններում, Պակիստանին հաջողվում էր «նստել միաժամանակ երկու աթոռի վրա»՝ համարվելով՝ եւ ԱՄՆ-ի, եւ Պեկինի ռազմավարական գործընկերը, ապա այժմ դժվար է պատկերացնել, թե հարկադիր երկընտրանքի առջեւ կանգնելու դեպքում Իսլամաբադը նախապատվությունը որին կտա: Հայտնի է միայն, որ այսօր Պակիստանը չի պատրաստվում հօգուտ ԱՄՆ-ի զոհաբերել Պեկինի հետ ունեցած «սրտագին եւ ժամանակով ստուգված հարաբերությունները»՝ վերջինիս հետ համագործակցությունը խորացնելով ամենատարբեր ուլորտներում, միաժամանակ լարվածության մեջ պահելով իր գլխավոր ախոյանին՝ Յնդկաստանին:

ԹՈՒՐՔ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Արաքս Փաշայան

Վրաստանը էթնիկ եւ դավանական առումով բարդ խճանկար ունեցող երկիր է: Այստեղ բնակվում են թե՛ քրիստոնյա, թե՛ իսլամ փոքրամասնություններ: Մուսուլմանների թիվը շուրջ կես միլիոն է: Նրանց մեջ կան երկու հիմնական մեծ խմբեր: Դրանք են՝ սուննիադավան էթնիկ վրացիները, որոնք բնակվում են Թուրքիային սահմանակից Աջարիայում¹ եւ շիադավան ադրբեջանցիները, ովքեր հավաքական ձեւով ապրում են Քվենդ-Քարթլի (ադրբեջանական տարբերակով՝ Բորչալու) նահանգում, ինչը նկատի է առնում Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանակից Մառնեուլի, նաեւ Գարդաբանի, Բոլնիսի եւ Դնանիսի շրջանները²:

Մուսուլմաններ կան նաեւ Վրաստանի այլ շրջաններում՝ այդ թվում՝ Թբիլիսիում: Իսլամադավան են նաեւ Պանկիսի կիրճում բնակվող եւ վայնախյան էթնիկ խմբին պատկանող քիստերը (մոտ 12.000), որոնց շրջանում տարածում ունի սուֆիականությունը:

Վրաստանում իսլամական էթնոդավանական փոքրամասնություններին առնչվող գործընթացները, որոնց վրա շատ դեպքերում զգալի է արտաքին դերակատարների ազդեցությունը, ժամանակ առ ժամանակ որոշակի հնչեղություն են ձեռք բերում՝ ուրվագծելով մասնավորապես թուրք-իսլամական գործոնի նշանակությունը:

Ադրբեջանական հիմնահարցը Վրաստանում

Վրաստանի ադրբեջանցի գործիչների համոզմամբ՝ իշխանությունները խտրական քաղաքականություն են վարում ադրբեջանական փոքրամասնության նկատմամբ: Վրաստանի ադրբեջանցիների շրջանում ձեւավորվել է որոշակի դիսկուրս, ինչի արդյունքում սահմանվել են ադրբեջանական համայնքի հիմնահարցերը, որոնք գլխավորապես սոցիալ-տնտեսական եւ մշակութային ուղղվածություն ունեն: Առանձնացվում են երեք հիմնական եւ անհետաձգելի խնդիրներ, որոնք կապված են հողի սեփականաշնորհման³, ազգային կրթության եւ լեզվի⁴ հետ: Կան նաեւ այլ խնդիրներ, որոնք կապվում են պետական պաշտոններում ադրբեջանցիների ներգրավման անհրաժեշտության, ադրբեջանական տեղանունների վրացականացման անթույլատրելիության, ադրբեջանա-

կան բնակության տարածքներում ենթակառուցվածքների զարգացման, գործազրկության կրճատման եւ այլ իրողությունների հետ: Ադրբեջանցի գործիչների պնդմամբ՝ ի տարբերություն ինքնավարության պահանջով հանդես եկող ջավախքահայերի, ադրբեջանցիների պահանջները քաղաքական բնույթ չեն կրում: Սակայն թբիլիսիի տեսանկյունից՝ դրանք առավելապես քաղաքական ենթատեքստ ունեն:

Ադրբեջանի պարագան

Պաշտոնական Բաքուն առերեւույթ չի կիսում Վրաստանի ադրբեջանցիների այն մտայնությունը, թե իշխանությունները նրանց նկատմամբ խտրական քաղաքականություն են իրականացնում, այլ ստեղծված հիմնահարցերը փորձում է բացատրել Վրաստանում առկա սոցիալ-տնտեսական խնդիրներով եւ ադրբեջանցիների՝ վրացերենին չտիրապետելու հանգամանքով: Բաքուն ի ցույց է դնում, որ չի միջամտում ադրբեջանցիների ներքին խնդիրներին եւ ձգտելով պահպանել ռազմավարական գործընկերությունը թբիլիսիի հետ՝ ամեն կերպ փորձում է զսպել ադրբեջանական համայնքի գործողությունները: Ասվածի ապացույցն է ս.թ. մարտի 10-ին Ադրբեջանի ներքին գործերի նախարարության աշխատակիցների կողմից Վրաստանի ադրբեջանցիների ազգային ասամբլեայի նախագահ Դաշգըն Գյուլմամեդովին ձերբակալելու փաստը: Մինչ այդ Գյուլմամեդովը վրացական իշխանություններից պահանջել էր դադարեցնել ազգային խտրականությունն ադրբեջանցիների նկատմամբ, ադրբեջաներենը դարձնել պետական լեզու:

Չնայած ադրբեջանցիների խնդիրների նկատմամբ Բաքվի արտաքուստ զսպված դիրքորոշմանը, իրականում պատկերը որոշակիորեն այլ է: Հենց Ադրբեջանում են գործունեության պարարտ հող գտնում Վրաստանի ադրբեջանցի ակտիվիստները: Նույն Ադրբեջանում են տեղի ունենում Վրաստանի ադրբեջանական կամ իսլամական տարաբնույթ կազմակերպությունների համագումարները: Պատահական չէ, որ 2006թ. օգոստոսին Բաքվում ստեղծվեց Վրաստանի ադրբեջանցիների միջազգային խորհուրդը՝ Ադրբեջանի մայրաքաղաքում շտաբ-բնակարանով: Ի դեպ, կառույցի նախագահ ընտրվեց թբիլիսիաբնակ էթնիկ ադրբեջանցի Ֆազիլ Ալիեւը, ով հետագայում, 2007թ., մասնակցեց Վրաստանի նախագահական ընտրություններին, իսկ նույն Դ.Գյուլմամեդովն ընտրվեց նախագահության կազմում:

Մեծ թիվ են կազմում ադրբեջանական լրատվամիջոցներին Վրաստանի ադրբեջանցի գործիչների տված հարցազրույցները, Ադրբեջանում

նրանց մամլո ասուլիսները: 2008-ի դեկտեմբերի վերջին ադրբեջանական «Թրենդ նյուզ» լրատվական գործակալության հետ հեռախոսազրույցում Վրաստանի ադրբեջանական «Յեյրաթ» ազգային շարժման առաջնորդ Ալիբալա Ասկերովը, ամփոփելով 2008 թվականը, արձանագրել է, որ վրացական իշխանություններն ադրբեջանական խնդիրների լուծման ուղղությամբ որեւէ քայլ չեն ձեռնարկել, չեն կատարել իրենց խոստումները, չի ստեղծվել էթնիկ փոքրամասնությունների խնդիրներով զբաղվող որեւէ պետական մարմին:

2009թ. հունվարին «Նորություններ-Ադրբեջան» լրատվական գործակալությունը տարածել է Վրաստանի ադրբեջանական կոնգրեսի նախագահ Ալի Բաբաեւի այն տեսակետը, թե չնայած այն փաստին, որ օգոստոսյան պատերազմի ընթացքում ադրբեջանցիները եղել են վրացիների կողքին, նյութական օգնություն ցույց տվել փախստականներին, Թբիլիսիի համար նրանք երկրորդ կարգի մարդիկ են, որոնք կարելիություն են ստանում միայն ընտրությունների ժամանակ:

Մարտի վերջին Ադրբեջանցիների համաշխարհային կոնգրեսի փոխնախագահ եւ պառլամենտական Սաբիր Ռուսթամխանլին «Թրենդ նյուզին» հայտնել է, որ Վրաստանում գործում է ադրբեջանցիներին արտաքսելու գաղտնի ծրագիր, որի արդյունքում ադրբեջանական դպրոցները բռնությամբ վրացականացվում են, վերջիններիս իրավունքները ոտնահարվում են, այնպիսի պայմաններ են ստեղծվում, որպեսզի ադրբեջանցիները հեռանան երկրից:

Թուրքիայի պարագան

Վրաստանում թուրք-իսլամական գործոնի պահպանումը եւ ակտիվացումն առանձնապես հետաքրքրում են Թուրքիային, որը Սպիտակ տան հետ համաձայնեցված կերպով այլեւս ներգրավվել է Վրաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող մի շարք ոլորտներում: Թուրքիան, որը Կովկասը համարում է իր ավանդական ազդեցության շրջանը, Վրաստանում իսլամականացմանը միտված քայլեր սկսեց ձեռնարկել դեռեւս 1990-ականներից, երբ զգալի թվով թուրք քարոզիչներ Վրաստանում որոշակի գործունեություն ծավալեցին:

Հատկանշական է, որ 2006թ. հունիսի 20-ին Թուրքիայի երզրում քաղաքում հռչակվեց Վրաստանի Իսլամական դեմոկրատական կուսակցությունը. հռչակագրի տակ ստորագրեցին Վրաստանի իսլամական փոքրամասնությունների մի շարք ներկայացուցիչներ (ադրբեջանցիներ, վրացիներ, չեչեններ, ինգուլներ, թուրք-մեսխեթցիներ եւ աջարներ):

Անկախ կուսակցության հետագա ճակատագրից, ակնհայտ է, որ Թուրքիան ձգտում է աջակցել Վրաստանի մուսուլմանների համախմբմանը:

Պատահական չէ, որ Եվրոպական խորհրդին Վրաստանի անդամակցության ժամանակ հենց Թուրքիայի նախաձեռնությամբ է, որ Վրաստանը ստանձնել է թուրք-մեսխեթցիների վերադարձը կազմակերպելու պարտավորությունը:

Վրաց-ռուսական օգոստոսյան պատերազմից հետո թուրքական եւ ադրբեջանական ՁԼՄ-ում տեղեկություններ հայտնվեցին այն մասին, որ Բաքուն եւ Անկարան պատրաստվում են ճնշումներ գործադրել Վրաստանի վրա՝ պահանջելով իրական ինքնավարություն տալ Աջարիային, ինքնավարություն շնորհել Քվեմո-Քարթլիին, կազմակերպել թուրք-մեսխեթցիների հայրենադարձությունը: Մասնավորապես, ադրբեջանական ՁԼՄ-ում զետեղված տեղեկությունների համաձայն՝ Ադրբեջանը նպատակ ունի քաղաքացիություն տալ Քվեմո-Քարթլիի ադրբեջանցիներին: Թե՛ թուրքական, թե՛ ադրբեջանական ՁԼՄ-ում եւ թե՛ Վրաստանի ադրբեջանցի գործիչների կողմից պարբերաբար հնչում է այն տեսակետը, որ Վրաստանի տարածքային ամբողջականության պահպանման միակերպ շիջումը Վրաստանը դաշնության վերածելն է:

Եզրակացություններ

Վրաստանում թուրք-իսլամական գործոնի ակտիվացումը նկատի է առնում ոչ միայն էթնոքաղաքական պահանջների աշխուժացում (իսկ հեռանկարում նաեւ՝ անջատողական պահանջներ) իսլամական առանձին շրջանակներում, այլեւ՝ ժողովրդագրական աճ հօգուտ թուրքական կամ իսլամական տարրի, ինչն առավել կամրապնդվի Սամցխե-Ջավախքում թուրք-մեսխեթցիների հնարավոր վերաբնակեցման պարագայում: Ջուզա-հեռաբար եւ համատեղ ձեռով թուրքական տարրի ներկայացվածությունը Քվեմո-Քարթլիում եւ Ջավախքում կվերացնի Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ առկա անջրպետը: Սա այն հարցն է, որն անմիջականորեն կապ ունի նաեւ Հայաստանի ազգային շահերի հետ, քանի որ նման զարգացումների դեպքում Հայաստանը բոլոր կողմերից կհայտնվի թուրքական տարրի շրջափակման մեջ:

Ցանկացած պահի թե՛ Անկարան եւ թե՛ Բաքուն Թբիլիսիի դեմ որպես կռվան կարող են օգտագործել հենց թուրք-իսլամական գործոնը: Չի բացառվում, որ Վրաստանում թուրք-իսլամական գործոնի ակտիվացման դեպքում Բաքուն եւ Անկարան գործեն համատեղ: Ի վերջո, Աջարիայով եւ Քվեմո-Քարթլիով են անցնում Թուրքիայի եւ Ադրբեջանի համար

կենսական նշանակություն ունեցող այնպիսի կոմունիկացիաներ, ինչպիսիք են Բաքու–Թբիլիսի–Ջեյհան եւ Բաքու–Սուպսա նավթամուղերը, Բաքու–Թբիլիսի–Կարս երկաթգիծը:

Վրաստանում թուրք-իսլամական գործոնի մասին բավական հետաքրքիր մի դիտարկում է արել վրաստանցի հետազոտող Թ.Կիզուրաձեն¹ իր «Վրացական հասարակությանն անհրաժեշտ է զարթնել» հոդվածում: Վերջինիս համոզմամբ՝ Վրաստանի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության թուրք-իսլամական վեկտորը մահացու սպառնալիք է այդ երկրի համար: Թուրքիան կարող է կատարել Վրաստանի փլուզման կատալիզատորի դեր, ինչը շահեկան կլինի նաեւ Ռուսաստանին: Հեղինակի կարծիքով՝ Վրաստանի ազգային շահերից է բխում թուրքական էքսպանսիան դիմագրավել Վրաստանի հայկական տարրի եւ մասնավորապես Սամցխե-Ջավախքի հայերի միջոցով, որոնց հետ վրացիներին միավորում են պատմական, մշակութային եւ կրոնական եզրերը:

¹ Ներկայումս մուսուլմանները կազմում են Աջարիայի բնակչության 30 տոկոսը:

² 1989թ. Վրաստանում ապրում էր մոտ 307,6 հազար ադրբեջանցի: 2002թ., վերջին մարդահամարի տվյալներով, ադրբեջանցիների թիվը նվազել է մինչեւ 284,8 հազար: Ադրբեջանական տվյալներով՝ Վրաստանում ապրում են կես միլիոն ադրբեջանցիներ:

³ Հողի խնդիրն առաջ է եկել նախագահ Է.Շելարոյանձեի օրոք իրականացված ագրարային բարեփոխումների ժամանակ, ինչի արդյունքում հիմնականում հողագործությամբ եւ գյուղատնտեսական ապրանքների վաճառքով զբաղվող ադրբեջանցիների մեծ մասը դուրս մնաց հողի սեփականաշնորհման գործընթացից եւ ներկայումս ստիպված է աշխատել վարձակալած եւ վրացիներին պատկանող հողակտորներում: Առկա խնդրի հիմնական պատճառներից մեկն այն է, որ իշխանությունները սահմանային շրջանները համարում են կարելու ռազմավարական վայրեր եւ հրաժարվում են սեփականացնել ադրբեջանցիների հողակտորները:

⁴ 2005թ. Կրթության մասին օրենքի համաձայն՝ Վրաստանի բոլոր դպրոցները պետք է անցնեն վրացական ուսուցման համակարգին՝ պահպանելով ազգային լեզվի ուսուցումը, ինչը կսկսի կիրառվել 2009թ. սեպտեմբերից:

ԹՈՒՐՔ-ՄԵՍԻՆԵԹՅԻՆԵՐԻ ՎՐԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՁ Վահրամ Հովյան

Հայտնի է, որ Վրաստանը, 1999թ. անդամակցելով Եվրոպայի խորհրդին, վերջինիս առջև պարտավորություն է ստանձնել լուծելու 1944թ. Վրաստանից արտաքսված թուրք-մեսխեթցիների վերադարձի հարցը: Իսկ Եվրոպական միությունը այս հարցի լուծման նպատակով անգամ 40-50 մլն եվրոյի դրամական աջակցություն է առաջարկել Վրաստանին՝ խոստանալով նաեւ թուրք-մեսխեթցիների վերադարձից հետո իր վրա վերցնել հետագա ծախսերը:

Սակայն ակնհայտ է, որ թուրք-մեսխեթցիների՝ իրենց նախկին բնակավայրեր վերադարձի հարցը զուտ մարդասիրական նկատառումներով չէ միայն պայմանավորված. այս խնդրում տարածաշրջանի մի շարք պետություններ ունեն քաղաքական որոշակի շահագրգռություններ: Ուստի անկախ Եվրոպայի խորհրդի առջև Վրաստանի ստանձնած պարտավորությունից, թուրք-մեսխեթցիների Վրաստան վերադառնալու հարցը միշտ էլ գտնվելու է մեր տարածաշրջանի պետությունների տեսադաշտում: Պատահական չէ, որ ԵԽ-ին Վրաստանի անդամակցությունից առաջ էլ այդ հարցը առկա է եղել տարածաշրջանի քաղաքական օրակարգում: Իսկ Եվրոպայի խորհրդին անդամակցելիս հենց Թուրքիայի ակտիվ ջանքերի արդյունքում է թուրք-մեսխեթցիների վերադարձի ապահովումը որպես պարտավորություն դրվել Վրաստանի առջև:

Թուրք-մեսխեթցիների ինքնության մասին

Թուրք-մեսխեթցիների ինքնության վերաբերյալ շրջանառվում է երեք հիմնական տեսակետ.

Վրացական տեսակետ, համաձայն որի՝ թուրք-մեսխեթցիները իսլամացած վրացիներն են, այսինքն՝ ծագումով վրացի են:

Թուրքական տեսակետ, համաձայն որի՝ նրանք ծագումով թուրք են եւ հաստատվել են Սամցխե-Ջավախքում Օսմանյան կայսրության շրջանի բնակչության տեղաշարժերի հետեւանքով:

Չեզոք տեսակետ, համաձայն որի՝ նրանք ո՛չ թուրք են եւ ո՛չ էլ վրացի: Նրանք ունեն իրենց առանձին էթնիկ ինքնությունը: Անգամ խոսվում է նրանց առանձին լեզվի մասին:

Վերոնշյալ տեսակետներից առավել տարածված են առաջին երկուսը: Երրորդն այնքան էլ մեծ տարածում չունի: Ինչ վերաբերում է թուրք-մեսխեթցիների ժամանակակից էթնիկ ինքնագիտակցությանը, ապա նրանք հիմնականում իրենց համարում են թուրք:

Թուրք-մեսխեթցիների թվաքանակի շուրջ

1944թ. դրությամբ, երբ տեղի է ունեցել թուրք-մեսխեթցիների տեղահանությունը, նրանց թվաքանակը կազմում էր մոտ 90 հազար: 1944թ., թշնամուն աջակցելու, մաքսանենգությամբ զբաղվելու եւ թուրքական հետախուզության համար լրտեսներ հավաքագրելու մեղադրանքով, խորհրդային իշխանության կողմից այդ բնակչությունը գրեթե ամբողջությամբ տեղահանության է ենթարկվել եւ բնակեցվել Միջին Ասիայի հանրապետություններում՝ Ուզբեկստանում, Ղազախստանում, Ղրղըզստանում: Տեղահանվածների ընդհանուր թիվը կազմել է մոտ 120 հազար: Սակայն բոլոր տեղահանվածները չեն, որ թուրք-մեսխեթցիներ են եղել: Միեւնույն մեղադրանքով թուրք-մեսխեթցիների հետ տեղահանության են ենթարկվել նաեւ քրդերը եւ մուսուլման հայերը, որոնք հիշատակվում են որպես հեմշիլներ: Թուրք-մեսխեթցիների թվաքանակը, ինչպես նշվեց, կազմել է մոտ 90 հազ.:

Տեղահանվածներից 15-17 հազարը ճանապարհին սովից կամ ցրտից մահացել է: Մնացած հատվածը հիմնականում բնակեցվել է Ուզբեկստանում: Տեղահանված թուրք-մեսխեթցիների որոշ մասն էլ բնակեցվել է Ղազախստանում եւ Ղրղըզստանում:

Վերաբնակեցված թուրք-մեսխեթցիներին տրվել է հատուկ վերաբնակչի կարգավիճակ, ինչը նշանակում էր, որ նրանք իրավունք չունեին իրենց բնակավայրից այլ տեղ տեղափոխվել: 1956թ. այդ արգելքը հանվել է թուրք-մեսխեթցիների վրայից, որի արդյունքում նրանց մի մասը Կենտրոնական Ասիայից տեղափոխվել է ԽՍՀՄ այլ վայրեր: 1974թ. թուրք-մեսխեթցիներին իրավունք է տրվել վերադառնալ Վրաստան: Սակայն հաշվի առնելով այնտեղ իրենց նկատմամբ սպասվող վերաբերմունքը՝ թուրք-մեսխեթցիները առանձնապես մեծ ակտիվություն չեն ցուցաբերել իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու հարցում: Արդյունքում՝ ներկայումս Վրաստանում բնակվող թուրք-մեսխեթցիների թվաքանակը կազմում է մոտ 1000 մարդ:

Ինչեւէ, տեղահանությունից հետո թուրք-մեսխեթցիների թվաքանակը էապես աճել է: Տարբեր տվյալների համաձայն՝ ներկայումս աշխարհում բնակվում է 300-500 հազ. թուրք-մեսխեթցի: Նրանց գերակշիռ մեծամասնությունը՝ 260-280 հազ., բնակվում է հետխորհրդային տարածքում:

Թուրք-մեսխեթցիների սփռման համար վճռական եղավ 1989թ.: Այդ տարի Ուզբեկստանի Ֆերգանայի հովտում սոցիալ-քաղաքական լարվածությունը հանգեցրեց թուրք-մեսխեթցիների կոտորածին, որի արդյունքում նրանք, ըստ էության, ենթարկվեցին երկրորդ տեղահանության: Ուզբեկստանից տեղահանվելով՝ թուրք-մեսխեթցիները մեծ մասամբ հաստատվեցին Ռուսաստանի Կրասնոդարի եւ Ստավրոպոլի երկրամասերում, ինչպես նաեւ Ղազախստանում եւ Ադրբեջանում: Որոշ քանակությամբ թուրք-մեսխեթցիներ էլ հաստատվեցին Ուկրաինայում (7 հազ.): Տեղահանվածների մի մասն էլ՝ մոտ 30 հազար մարդ, հաստատվեց Թուրքիայում: Հետագայում Ռուսաստանում հաստատված թուրք-մեսխեթցիների մի մասը՝ մոտ 10 հազ. մարդ, տեղափոխվեց Միացյալ Նահանգներ: Ներկայումս թուրք-մեսխեթցիների աշխարհագրական սփռվածությունն ունի հետեւյալ մոտավոր պատկերը.

	<i>Երկիր</i>	<i>Թվաքանակ</i>
<i>Հետխորհրդային տարածք</i>	Ղազախստան Ռուսաստան Ադրբեջան Ղրղըզստան Ուզբեկստան Ուկրաինա	90 հզ. 70 հզ. 70 հզ. 30 հզ. 15 հզ. 7 հզ.
<i>Հետխորհրդային տարածքից դուրս</i>	Թուրքիա ԱՄՆ	35-60 հզ. 5-10 հզ.

Վերադարձի խնդրով շահագրգիռ պետությունները

Թուրք-մեսխեթցիների հնարավոր վերադարձը Վրաստան, ինչպես արդեն նշվեց վերը, շոշափում է մի շարք երկրների շահերը:

Ռուսաստանի համար թուրք-մեսխեթցիների զանգվածային վերադարձը իրենց նախկին բնակավայրեր լրացուցիչ գործոն է Վրաստանի ներքին դրությունն ապակայունացնելու եւ անջատողականության նոր օջախներ ստեղծելու համար:

Թուրքիայի եւ Ադրբեջանի համար թուրք-մեսխեթցիների՝ իրենց նախկին բնակավայրեր զանգվածաբար վերադարձն ունի երկու հիմնական նշանակություն.

1. Թուրք-մեսխեթցիների զանգվածային վերադարձը եւ բնակեցումը պատմական Ջավախքում կվերացնի Թուրքիայի եւ Ադրբեջանի թուրք բնակչության միջեւ անջրպետը՝ նրանց միացնելով միմյանց:

2. Հայաստանն այսօր արեւելքից ու արեւմուտքից շրջափակված է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Իրանի՝ Հայաստանի սահմանին հարակից տարածքները բնակեցված են թյուրքալեզու ազերիներով: Վրաստանի հարավային սահմանները նույնպես զգալիորեն բնակեցված են ազգությամբ թուրք բնակչությամբ: Եվ եթե պատմական Ջավախքում նույնպես բնակչության հարաբերակցությունը փոխվի հոգուտ թուրք բնակչության՝ ի հաշիվ հայերի, ապա Հայաստանը գրեթե լիովին կհայտնվի թուրքական շրջապատման մեջ:

Վրաստանի համար թուրք-մեսխեթցիների վերադարձի հարցը միանշանակ ընկալում չունի: Փորձագետների մի մասի կարծիքով՝ Վրաստանի շահերից որոշակիորեն բխում է թուրք-մեսխեթցիների վերադարձը՝ Ջավախքում հայ բնակչության քանակական գերակշռությունը չեզոքացնելու առումով: Թուրք բնակչության հաստատմամբ Ջավախքում լարվածություն կառաջանա հայերի եւ թուրքերի միջեւ, ինչը բխում է Վրաստանի շահերից՝ բաժանիր, որ տիրես սկզբունքով: Հայերը եւ թուրքերը վրացական պետության դեմ պայքարելու փոխարեն կպայքարեն միմյանց դեմ:

Թեեւ այս տեսակետը հիմնազուրկ չէ, այնուամենայնիվ, կարծում ենք, որ Վրաստանին մեծ հաշվով ձեռնտու չէ թուրք-մեսխեթցիների զանգվածային վերադարձը: Նրանց վերադարձով էլ ավելի կխորանա Վրաստանի՝ առանց այդ էլ ակնհայտ էթնիկ բազմազանությունը, երկրում կուժեղանա առանց այդ էլ ուժեղ թուրքական տարրը, ինչը լուրջ մարտահրավեր է Վրաստանի տարածքային ամբողջականությանը: Վրաստանը, գտնվելով երկու թուրքական պետությունների՝ Թուրքիայի եւ Ադրբեջանի հարեւանությամբ, չի կարող չզփոսակցել, որ երկրի հարավային շրջաններում ուժեղացած թուրքական տարրը ինքնավարության կամ անկախության ձգտելիս ստանալու է այդ պետությունների աջակցությունը: Ավելին, Թուրքիան եւ Ադրբեջանը իրենք կարող են հրահրել անջատականություն Վրաստանի հարավային շրջաններում՝ օգտագործելով թուրք բնակչությանը: Այսպիսով, թուրք-մեսխեթցիների զանգվածային վերադարձի պարագայում Վրաստանի մասնատման հեռանկարն ավելի իրական կդառնա:

Եթե սրան ավելացնենք նաեւ այն, որ ներկայումս Վրաստանում վերելք է ապրում ազգայնականությունը, որը դրսեւորվում է նաեւ ազգային փոքրամասնությունների եւ նրանց մշակույթի նկատմամբ անհամդուրժողականությամբ, ապա ակնհայտ կդառնա, որ թուրք-մեսխեթցիների վերադարձը նաեւ այս առումով ձեռնտու չէ վրաց իշխանություններին:

«Միտք» վերլուծական կենտրոնը, վկայակոչելով տարբեր սոցիոլոգիական հարցումների արդյունքները, նշում է, որ վրացական հասարակության 75-85%-ը դեմ է թուրք-մեսխեթցիների վերադարձին: Դա նշանա-

կում է, որ Վրաստանում հասարակական կարծիքի մակարդակով նույնպես ընդունելի չէ թուրք-մեսխեթցիների վերադարձը:

Ինչ վերաբերում է Հայաստանին եւ Հայութեանը, ապա թուրք-մեսխեթցիների վերադարձը միանշանակ դեմ է մեր ազգային շահերին: Սամցխե-Ջավախքում նրանց հաստատվելով՝ Հայաստանը գրեթե լիովին կհայտնվի թուրքական օղակի մեջ:

Այսպիսով, տարածաշրջանի երկրներից Ռուսաստանը, Թուրքիան եւ Ադրբեջանը շահագրգռված են թուրք-մեսխեթցիների վերադարձով Վրաստան: Մինչդեռ դա հակասում է Հայաստանի եւ Վրաստանի շահերին: Հետեւաբար, թուրք-մեսխեթցիների՝ իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու խնդիրը թերեւս այն հարցերից մեկն է, որում Հայաստանի եւ Վրաստանի շահերը որոշակիորեն համընկնում են:

Վերադարձի հնարավորությունները

Թեեւ թուրք-մեսխեթցիների՝ Վրաստան վերադարձի հարցը գրեթե միշտ եղել է քաղաքական օրակարգում, սակայն խնդիրն առավել հրատապ դարձավ Վրաստանի՝ Եվրոպայի խորհրդին անդամակցության համատեքստում: 1999թ. դառնալով ԵԽ անդամ՝ Վրաստանն այդ կազմակերպության առջեւ պարտավորություն է ստանձնել լուծելու թուրք-մեսխեթցիների վերադարձի հարցը: Ըստ նախատեսված պլանի՝ հարցը պետք է լուծվեր 12 տարվա ընթացքում՝ մինչեւ 2011թ.: 2001թ. պետք է ընդունվեր օրենք թուրք-մեսխեթցիների վերադարձի մասին: Իսկ 2002-ից պետք է սկսվեր նրանց վերադարձը, որը պետք է ավարտվեր 2011թ.:

Սակայն Վրաստանի խորհրդարանը միայն 2007թ. հունիսին ընդունեց թուրք-մեսխեթցիների վերադարձի մասին օրենքը: Համաձայն այդ օրենքի՝ 2009թ. հունվարի 1-ին պետք է ավարտվեր վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների հայտերի ներկայացման ժամանակը:

2008թ. դեկտեմբերին Վրաստանի խորհրդարանն այդ ժամկետը երկարաձգեց մինչեւ 2009թ. հուլիսի 1-ը: Որպես ժամկետի երկարաձգման պատճառներ նշվում էին 2008թ. Վրաստանում տեղի ունեցած նախագահական (հունվար), խորհրդարանական (մայիս) եւ Աջարիայի Գերագույն խորհրդի (նոյեմբեր) ընտրությունները, ինչպես նաեւ օգոստոսյան վրաց-ռուսական պատերազմը, որոնք դիտվել են որպես թուրք-մեսխեթցիների վերադարձը խոչընդոտող հանգամանքներ:

Իրականում, սակայն, վերոհիշյալ իրադարձություններից միայն 2008թ. օգոստոսյան վրաց-ռուսական պատերազմն էր, որ էապես կարող էր խոչընդոտել Վրաստան վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների հայտերի ներկայացման գործընթացին: Համենայնդեպս, վերոնշյալ օրեն-

քում փոփոխություններ իրականացնողները, որոնցով երկարաձգվեց տարբեր երկրների հյուպատոսություններ թուրք-մեսխեթցիների հայտեր ներկայացնելու ժամկետը 2009թ. հունվարի 1-ից մինչև հուլիսի 1-ը, չեն մանրամասնում, թե ինչպես կարող էին 2008թ. վրացական ընտրությունները (հատկապես Աջարիայի Գերագույն խորհրդի ընտրությունները) խոչընդոտել այդ գործընթացին: Իրականում, չի բացառվում, որ վրացական կողմը գնացել է ժամկետի երկարացմանն արտաքին ուժերի ճնշմամբ:

Համաձայն վրացական տվյալների՝ 2008թ. վերջին տարբեր երկրների վրացական հյուպատոսությունները ստացել են ընդամենը 900 հայտ:

Սակայն համաձայն ռուսական եւ ադրբեջանական մամուլի հրապարակումների՝ Վրաստան վերադառնալ ցանկացողների թիվը շատ ավելի մեծ է, իսկ ներկայացրած հայտերի փոքր թվաքանակը բացատրվում է Վրաստանի կողմից հարուցված արհեստական խոչընդոտներով եւ գործընթացի արհեստական բարդացմամբ:

Մասնավորապես ռուսական հրապարակումներում հնչում է այն տեսակետը, որ վրացական իշխանությունները չեն կատարում միջազգային հանրության առջև իրենց ստանձնած պարտավորությունները: Թուրք-մեսխեթցիների՝ Վրաստան վերադարձի խնդրի առնչությամբ 2008թ. հոկտեմբերին Ռուսաստանի Պետական դումայի ընդունած հայտարարության մեջ, որը նշանակալի արձագանք գտավ մամուլում, նշվում է, որ առանց այն էլ նախատեսված ժամկետից մեծ ուշացումով ընդունված թուրք-մեսխեթցիների վերադարձի մասին օրենքը կրում է խիստ դեկլարատիվ բնույթ, եւ դրա նպատակն է ընդամենը ստեղծել ԵԽ-ի առջև Վրաստանի ստանձնած պարտավորությունների կատարման պատրանք:

Համաձայն ռուսական մամուլի՝ Ռուսաստանից Վրաստան վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների թիվը մոտ 90 հազ. է: Իսկ ադրբեջանական աղբյուրների համաձայն՝ Ադրբեջանից Վրաստան վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների թիվը կազմում է մոտ 40 հազար:

Ըստ վրացական պաշտոնական աղբյուրների, 2008թ. դեկտեմբերի դրությամբ տարբեր երկրներում Վրաստանի հյուպատոսությունները, ընդհանուր առմամբ, վերադառնալ ցանկացող թուրք-մեսխեթցիների կողմից ստացել էին ընդամենը 900 հայտ, ինչը, հաշվի առնելով թուրք-մեսխեթցիների ընդհանուր թվաքանակը (300-500 հազ.), այդքան էլ մեծ ցուցանիշ չէ: Իսկ համաձայն թուրքական պաշտոնական տվյալների՝ 2008թ. սեփական միջոցներով Թուրքիայից Վրաստան է վերադարձել ոչ ավելի, քան 50 թուրք-մեսխեթցիների ընտանիք:

Թուրք-մեսխեթցիների վերադարձին խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներից հիմնականում կարելի է առանձնացնել հետևյալները.

1. Վրաստանում եւ, հատկապես՝ Սամցխե-Ջավախքում, սոցիալ-

տնտեսական պայմանները խիստ անբարենպաստ են թուրք-մեսխեթցիների զանգվածային վերադարձի համար: Դժվար է պատկերացնել, որ Ռուսաստանի, Ղազախստանի կամ Թուրքիայի քիչ թե շատ նորմալ բնակավայրերում հաստատված թուրք-մեսխեթցիները մեծ խանդավառությամբ զանգվածաբար կտեղափոխվեն Վրաստան՝ Սամցխե-Ջավախք, որտեղ սոցիալ-տնտեսական պայմաններն անհամեմատ անբարենպաստ են: Ինչ վերաբերում է Ադրբեջանում հաստատված թուրք-մեսխեթցիներին, ապա, սոցիալ-տնտեսական առումով նրանց պայմանները, եթե ավելի բարենպաստ չեն, ապա անբարենպաստ էլ չեն Վրաստանի պայմանների համեմատությամբ:

2. Այսօրվա թուրք-մեսխեթցիների ջախջախիչ մեծամասնությունը կազմում է ժամանակին արտաքսված թուրք-մեսխեթցիների երկրորդ կամ երրորդ սերունդը: Ի տարբերություն առաջին սերնդի՝ նրանք երբեւէ չեն ապրել Սամցխե-Ջավախքում եւ հոգեբանորեն մեծ կապվածություն չունեն այդ երկրամասի հետ: Հետեւաբար, հոգեբանական առումով նույնպես մեծ չէ ներկայիս թուրք-մեսխեթցիների վերադարձի մոտիվացիան:

3. Գլխավորապես թյուրքալեզու երկրներում հաստատված թուրք-մեսխեթցիներն արդեն զգալիորեն ադապտացվել եւ ինտեգրվել են իրենց հարազատ թյուրքական միջավայրում: Հետեւաբար, խորթ միջավայրում հայտնվելու հեռանկարն այնքան էլ հրապուրիչ չի կարող լինել նրանց համար:

Սակայն քիչ է հավանականությունը, թե Ռուսաստանը, Թուրքիան եւ Ադրբեջանը ձեռնպահ կմնան իրենց երկրներում հաստատված թուրք-մեսխեթցիների վերադարձի գործին միջամտելուց: Նրանք ամենայն հավանականությամբ նախաձեռնողականություն կդրսեւորեն այդ հարցում եւ կփորձեն թուրք-մեսխեթցիների Վրաստան վերադարձին հաղորդել կազմակերպված բնույթ: Այդ մասին են վկայում Ռուսաստանի Պետական դոմայում ծավալված քննարկումները թուրք-մեսխեթցիների Վրաստան վերադարձի հարցի առնչությամբ, Թուրքիայում եւ Ադրբեջանում այդ նպատակով ստեղծված հիմնադրամները, «Վաթան» կազմակերպության ակտիվությունը թուրք-մեսխեթցիների վերադարձը կազմակերպելու ուղղությամբ եւ այլն:

ԹՈՒՐՔ-ՄԵՍԽԵԹՅՈՒՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Ա. Գուրել

ԽՍՀՄ փլուզումից հետո, հետխորհրդային տարածքում աճող էթնիկական լարվածությունից, տնտեսական խնդիրներից եւ ազգային պատկանելությամբ պայմանավորված խտրականությունից ապաստանի որոնումներում, սկսեց թուրք-մեսխեթցիների գաղթի երրորդ ալիքը թուրքիա:

1992թ. հուլիսի 2-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից ընդունվեց «Թուրքիա թուրք-մեսխեթցիների ներգաղթի եւ տարաբնակեցման մասին» թիվ 3835 օրենքը, որը երաշխավորեց նրանց տեղափոխությունը Թուրքիա ինչպես ինքնուրույն, այնպես էլ վերաբնակեցման ծրագրերով՝ այն պայմանով, որ նրանց թվաքանակը չգերազանցի տարեկան լիմիտը:

Այսօր Թուրքիայում ապրող թուրք-մեսխեթցիներին տրվել է պարզեցված կարգով թուրքական քաղաքացիություն ստանալու ժամանակավոր իրավունք: Փորձագետները կարծում են, թե թուրքական ղեկավարության սույն օրենսդրական նախաձեռնությունը կապված է պատմական հայրենիք (Վրաստան) նրանց շուտ վերադարձի հանդեպ լավատեսության պակասից՝ այդ երկրի քաղաքական, տնտեսական ու սոցիալական անկայունության պատճառով:

Թուրքական պետության ղեկավար Աբդուլա Գյուլը հավանություն տվեց հիշյալ օրենքում լրացուցիչ ժամանակավոր հողվածի ավելացմանը, որով պարզեցվում է թուրք-մեսխեթցիների կողմից թուրքական քաղաքացիություն ստանալու ընթացակարգը: 2009թ. փետրվարի 28-ին սույն ուղղումը հրապարակվեց «Պաշտոնական թերթ»-ում: Դա, Թուրքիայի Հանրապետության սահմանադրության համաձայն, նշանակում է, որ տվյալ ուղղումը ստացել է օրենքի ուժ: Այսուհետեւ, Թուրքիայում բնակվող շուրջ 60 հազար թուրք-մեսխեթցիներ հնարավորություն ունեն երեք ամսվա (ս.թ. մարտ, ապրիլ, մայիս) ընթացքում համապատասխան դիմումի դեպքում՝ պարզեցված կարգով ձեւակերպել թուրքական քաղաքացիություն:

Նոր հողվածը պատրաստվել էր կառավարող «Արդարություն եւ զարգացում» կուսակցության (ԱԶԿ) կողմից: Սույն նախաձեռնությունը լիովին կարելի է դիտարկել Թուրքիան բնակեցրած էթնիկ սփյուռքերի, ինչպես նաեւ կրոնական փոքրամասնությունների հետ մերձեցման ուղղությամբ ԱԶԿ գործողությունների ակտիվացման համատեքստում, ինչը բացա-

տրվում է Անկարայի կողմից Եվրոպական միության պահանջների կատարմամբ:

Միաժամանակ, տեղի մի շարք փորձագետներ թուրքական ղեկավարության այս քայլը գնահատում են նաեւ որպես Վրաստան թուրք-մեսխեթցիների վերադարձի հույսի որոշակի չափով վերջնական կորուստ: Այս հարցով թուրք-վրացական բազմակի բանակցություններն ավարտվել են Թբիլիսիի սին խոստումներով, որոնք չեն ամրագրվել կոնկրետ գործողություններով: Այսպես, Թուրքիայի ԱԳ նախարարությունը վրացական կողմի հետ երկկողմանի շփումների ընթացքում բազմիցս բարձրացրել է համապատասխան օրենքի գործողության ժամկետի երկարացման, հայրենադարձության հստակ մեխանիզմների ստեղծման եւ պատմական հայրենիք վերադարձի դեպքում հայցորդներին համատեղ բնակության համար վայրի հատկացման հարցը: Բացի այդ, թուրք փորձագետների տեսանկյունից, այսօր Վրաստանի բարդ իրավիճակի կարգավորման՝ վերաբնակեցմանը նպաստող հեռանկարները քիչ իրական են թվում:

Դրա հետ մեկտեղ, մի շարք հարցումներն ու հետազոտությունները հաստատում են, որ թուրք-մեսխեթցիներն ընդհանուր առմամբ չեն պատրաստվում վերադառնալ Վրաստան՝ տարածաշրջանի անկայուն իրադրության եւ վրացական կառավարության կողմից իրենց արժանապատիվ վերադարձի ու փուլային հայրենադարձության համար երաշխիքների բացակայության պատճառով: 2007թ. հուլիսի 11-ին Վրաստանում ընդունված «20-րդ դարի 40-ական թվականներին նախկին ԽՍՀՄ կողմից բռնի տարհանված անձանց հայրենադարձության մասին» թիվ 5261-PC օրենքը գործնականում մինչ օրս չի գործում: Թուրքական իշխանությունների տվյալներով՝ 2008թ. իրենց հաշվին Վրաստան է վերադարձել 50-ից ոչ ավելի ընտանիք: Այդ երկիր թուրք-մեսխեթցիների վերադարձը բարդանում է վարչարարական երկար ընթացակարգի պատճառով, որը կապված է վրացերեն կամ անգլերեն լեզվով բազմաթիվ փաստաթղթերի, ինչպես նաեւ այդ օրենքի գործողության ժամկետի (մինչեւ 2008թ. դեկտեմբերի 31-ը) սահմանափակման հետ:

Անհրաժեշտ է նշել, որ Թուրքիայի թուրք-մեսխեթցիները լավ կազմակերպված են: Նրանք ակտիվ մասնակցություն են ցուցաբերում Անկարայի կողմից աջակցվող թյուրքալեզու պետությունների ու համայնքների համաշխարհային ղուրուլթայներին: Նրանք հիմնավոր կերպով հավակնում են լինել մի շարք երկրներում ցրված թուրք-մեսխեթցիների յուրօրինակ կենտրոն: Այսպես, 2008թ. դեկտեմբերին Թուրքիայում անցկացվեց Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղըզստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի, Թուրքիայի եւ այլ երկրների թուրք-մեսխեթցիների

միությունների, ընկերակցությունների, մշակութային կենտրոնների 42 ներկայացուցիչների համագումարը: Հանդիպմանը մասնակցում էր շուրջ 40 կազմակերպություն՝ 11 երկրից:

Անկարայում քննարկված հիմնական հարցերից էր մեկ համադաշնության մեջ թուրք-մեսխեթցիների բոլոր կազմակերպությունների միավորման մասին առաջարկությունը, որը կկարողանա առավել արդյունավետ կերպով համակարգել պատմական հայրենիք նրանց հայրենադարձության գործընթացը եւ ֆինանսական ու իրավական օգնության տրամադրումը: Երկարատեւ բանավեճերի ընթացքում Թուրք-մեսխեթցիների համադաշնության համաշխարհային խորհրդի նախագահ ընտրվեց Ղազախսկան ազգային կենտրոնի ղեկավար Զ.Իսմիխանօղլին: Աշխարհի տարբեր երկրներում ապրող թուրք-մեսխեթցիների միջեւ փոխգործակցության օպտիմալացման համար նաեւ պետք է ընտրվեն Կենտրոնական Ասիայի, Կովկասի, Թուրքիայի, Եվրամիության եւ ԱՄՆ գծով տարածաշրջանային ներկայացուցիչներ, որոնք կիրականացնեն կենտրոնի հետ իրենց գործողությունների համակարգումը: Կազմակերպությունների մտադրմամբ, հենց Համադաշնությունը կներկայացնի իրենց շահերը Վրաստան վերադարձի հարցով բանակցություններում:

Բացի այդ, նաեւ որոշում ընդունվեց Անկարայում Համադաշնության խորհրդի կենտրոնական բաժնու մասին (ավելի վաղ այն գոյություն ուներ միայն թղթի վրա): Համակարգողի պարտականությունները ստանձնեց նոր հիմնված «Ալթին քյոփրյու» (թարգմանաբար՝ «Ոսկե կամուրջ») եռամսյա հանդեսի թուրք ներկայացուցիչ Ա.Աքսուն: Որպես թուրք-մեսխեթցիների շրջանում աշխատանքների ակտիվացման առաջին քայլ՝ 2009թ. հունվարին լույս տեսավ այդ հանդեսի 120 էջանոց առաջին համարը: Հանդեսը հրատարակվեց ադրբեջաներեն, ղազախերեն, ուզբեկերեն, թուրքերեն, անգլերեն եւ ռուսերեն լեզուներով: Հետագայում ծրագրվում է հանդեսը թողարկել մեկուկեսամսյա պարբերականությամբ:

Հարկ է նշել, որ վերաբնակեցման ծրագրերի շրջանակներում առաջին քայլը եղավ 1990-ական թվականների սկզբին թուրքական իշխանությունների համաձայնությունը՝ թույլատրելու թուրք-մեսխեթցիների ընտանիքների ներգաղթը Կարսի նահանգ, որը գտնվում է նրանց հայրենի շեներից ոչ հեռու, ուր արդեն նախորդ դարի 30-ական թվականներից ապրում էր նրանց ցեղակիցների մի հատվածը: Այդ ժամանակահատվածում գաղթած թուրք-մեսխեթցիները ստացան քաղաքացիական իրավունքներ, մեծամասնությունը՝ իրենց մասնագիտությանը եւ որակավորման մակարդակին համապատասխան, տեղավորվեցին աշխատանքի պետական հիմնարկներում: Սակայն օրենսդրական միջոցները գործեցին սահմանափակ

ժամանակ, եւ այդ ընտանիքների ինտեգրման գործընթացը մինչ օրս ավարտված չէ:

Նախաձեռնված պետական վերաբնակեցումից բացի, թուրք-մեսխեթցիների զգալի մասը Թուրքիա է ներգաղթել ինքնուրույն: Թուրքիայում նրանց նշված թվաքանակը՝ շուրջ 60 հազար մարդ, ոչ պաշտոնական տվյալ է: Մինչեւ 2002թ., Թուրքիայի ՆԳ նախարարությունը թուրք-մեսխեթցիներին բնակության իրավունքի փաստաթղթի հետ տվել է նաեւ աշխատանքի թույլտվություն: Ներկա պահին ավելի քան 32 հազար մարդ ստացել է անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը եւ կարողացել է օրինականաճանաչվել:

ԱՁԿ իշխանության գալուց հետո, թուրք-մեսխեթցիների հանդեպ քաղաքականությունը որոշակի փոփոխություն կրեց. կառավարությունը սկսեց քայլեր ձեռնարկել Թուրքիայի հարկադրված ներգաղթյալների ադապտացման համար պատասխանատվությունն իր վրայից հանելու ուղղությամբ: 2004թ. օգոստոսի 5-ին դուրս եկավ կառավարության նոր որոշումը, որն, ըստ էության, չեղյալ հայտարարեց թուրք-մեսխեթցիների համար արտոնյալ կարգը, համաձայն որի՝ բնակության իրավունքի փաստաթղթի տրամադրման համար հայցորդների դիմումները քննարկվում են միայն անհատական կարգով, ինչպես նաեւ ավելացվեց Թուրքիայում օրինականաճանաչվու համար պարտադիր փաստաթղթերի թիվը: Այսօր անօրինական ներգաղթյալ թուրք-մեսխեթցիների թիվը, մոտավոր հաշվարկներով, կազմում է շուրջ 20 հազար մարդ:

Հիմնականում, թուրք-մեսխեթցիները Թուրքիա են եկել Ուզբեկստանից, Ղազախստանից ու Ղրղըզստանից: Ուզբեկստանից գաղթածները, սովորաբար, ձգտել են դեպի խոշոր արդյունաբերական կենտրոններ, ինչպիսին է Բուրսան (20 հազար մարդ), Ղազախստանից եւ Ղրղըզստանից եկածները բնակություն են հաստատել Թուրքիայի հարավում, մասնավորապես, Անթալիայում (4 հազար մարդ), ինչպես նաեւ Ստամբուլում եւ Անկարայում: Միաժամանակ, խնդիրները, որոնց հետ նրանք բախվում են, ընդհանուր են Թուրքիայում ապրող բոլոր ներգաղթյալների համար: Դա, առաջին հերթին, միջնակարգ ու բարձրագույն կրթության վկայականների օրինականացումն է, աշխատանքի տեղավորման, բնակարանի հարցերը, բժշկական ապահովագրության բացակայությունը:

Բուրսայում ապրող թուրք-մեսխեթցիները հիմնականում զբաղված են տեքստիլ ու մեքենաշինական հատվածի ոչ որակյալ աշխատանքներում: Երկու տնտեսական ճգնաժամերը, որոնք ապրեց Թուրքիան 1994 եւ 2001 թվականներին, սնանկացրին տեքստիլ ու շինարարական արտադրությունները եւ հանգեցրին, որպես կանոն, գործազրկության աճին այնտեղ

աշխատող թուրք-մեսխեթցիների շրջանում: Անթալիայի ավիը ներգաղթյալների համար դարձել է հրապուրիչ՝ ի հաշիվ զարգացող զբոսաշրջության հատվածի եւ ռուսախոս զբոսաշրջիկների աճող թվաքանակի: Թուրք-մեսխեթցիների բավական շատ ընտանիքներ, որոնք սկզբում բնակություն էին հաստատել Բուրսայում, այնուհետեւ տեղափոխվեցին Անթալիա, որտեղ, շնորհիվ ռուսերենի իմացության, կարողացան աշխատանք գտնել բազմաթիվ տուրիստական ընկերություններում: Իգդիրում (Կարսի վիլայեթ) ապրող թուրք-մեսխեթցիները բնակարանի գնման համար կառավարությունից ստացան արտոնյալ վարկեր եւ աշխատում են հիմնականում գյուղատնտեսական հատվածում, ինչպես նաեւ մեկնում են սեզոնային աշխատանքի Անթալիա եւ այլ խոշոր քաղաքներ:

Լուրջ խնդիրներից մեկը, որին Թուրքիայում բախվում են թուրք-մեսխեթցիները, հանդիսանում է երեխաներին դպրոցում տեղավորելը: Երեխաներն, առանց թուրքական քաղաքացիության, ուսումնական հաստատություններ ընդունվում են մեկտարյա բնակության իրավունքի փաստաթուղթ ստանալուց հետո: Նրանց տեղավորումը, ովքեր մինչ այժմ բնակվում են անօրինական, չափազանց խնդրահարույց է, եւ նրանք չեն կարող ատեստավորվել: Այդ դեպքերում երեխաներին տարրական կամ միջնակարգ կրթություն ստանալու մասին փաստաթղթեր չեն տրամադրում: Այսպիսով, նրանք չեն կարող շարունակել ուսումը եւ ընդունվել համալսարան: Միաժամանակ, Թուրքիան ամեն տարի արտերկրի թուրքական համայնքներից ընդունում է ուսանողների որոշակի քանակ, եւ նրանց մի մասը ստանում է թուրքական կառավարության կրթաթոշակներ: Թուրք-մեսխեթցի ուսանողների համար նախատեսված է համալսարաններ ընդունվելու հատուկ քվոտա:

Թուրք-մեսխեթցիների մասնակցությունը Թուրքիայի քաղաքական կյանքին սահմանափակված է այն անձանց ընտրական ակտիվությամբ, որոնց հաջողվել է ստանալ թուրքական քաղաքացիություն: Եթե խոսենք քաղաքական կուսակցությունների մասին, որոնց համակրում են թուրք-մեսխեթցիները, ապա մեծամասնությունը քվեարկում է պահպանողական «Ազգայնական շարժում» կուսակցության եւ կառավարող ԱԶԿ-ի օգտին: Ավելի վաղ նրանք իրենց ձայները տվել են «Հայրենիք» կուսակցությանը՝ հիմնված Թուրքիայի նախկին նախագահ ու վարչապետ Թուրգութ Օզալի կողմից, որը եւ կանգնած է եղել երկիր թուրք-մեսխեթցիների ներգաղթի ակունքներին:

Սփյուռքի անդամների միջեւ փորձի փոխանակման ու Թուրքիայում նրանց ադապտացման համար ստեղծված են տարածաշրջանային հասարակական կազմակերպություններ, որոնք եւ ներկայացնում են

նրանց շահերը: Դրանցից են «Թուրք-մեսխեթցիների համերաշխության եւ մշակույթի ասոցիացիան», «Թուրք-մեսխեթցիների կրթության, մշակույթի եւ սոցիալական համերաշխության ասոցիացիան» եւ այլն: Նրանք բոլորը միավորված են «Թուրք-մեսխեթցիների ասոցիացիաների միջազգային դաշնության» մեջ՝ Անկարայում գտնվող կենտրոնակայանով, որը ծառայում է որպես կամուրջ հասարակական ու պաշտոնական կառույցների միջեւ եւ համակարգում է պարբերական հանդեսների ու նորությունների տեղեկագրերի թողարկման աշխատանքները: Չի կարելի բացառել, որ այն կարող է Անկարայի համար վերածվել այլ երկրների թուրք-մեսխեթցիների համայնքների հետ նպատակասլաց աշխատանքի ազդեցիկ լծակի՝ նկատի ունենալով այն խնդիրների իրականացումը, որոնք առաջադրվել են թուրք ժողովուրդների եւ համայնքների համաշխարհային դուրուլթայների կողմից:

Տեղի քաղաքական տեսաբանները ելնում են նրանից, որ, ընդհանուր առմամբ, թուրք-մեսխեթցիների վիճակը Թուրքիայում բավարար է եւ, չնայած բնակության համար անհրաժեշտ փաստաթղթերի ստացման դատավարական բարդություններին, նրանք լավ են ադապտացվում թուրքական միջավայրին: Ոչ պաշտոնական աջակցությունն ու կարեկցանքն ինչպես տեղի բնակչության, այնպես էլ պետության կողմից (իշխանությունները, գործնականում, աչք են փակում անօրինական վերաբնակիչների վրա), ամրապնդում են թուրքական հողի նկատմամբ կապվածության զգացումը ներգաղթյալների մոտ եւ, այդպիսով, նրանք արագ ադապտացվում են ինչպես սոցիալական ու հասարակական, այնպես էլ քաղաքական տեսանկյունից:

iimes.ru

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գազիկ Տեր-Հարությունյան ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԵՐ	1
Սուրեն Մանուկյան ԹՈՒՐՔԱԿԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	5
Ֆեթիյե Չեթին «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՁ ՕՏԱՐ ՉԹՎԱՑ...».....	11
Սեւակ Սարուխանյան ԶԱՐԳԱՑՈՒԿՆԵՐ ԻՐԱՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ	17
Աղավնի Հարությունյան ՉԻՆԱՍՏԱՆ – ՊԱԿԻՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾ ԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	21
Արաքս Փաշայան ԹՈՒՐՔ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ	27
Վահրամ Հովյան ԹՈՒՐՔ-ՄԵՍԽԵԹՅՈՒՆԵՐԻ ՎՐԱՍՏԱՆ ՎԵՐԱԴԱՐՁԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ	32
Ա. Գուրեւ ԹՈՒՐՔ-ՄԵՍԽԵԹՅՈՒՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ	39

*Շապիկին պատկերված է
տեսարան Սոկսից
(Ոգմ գյուղի ճանապարհին)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Սելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ Օ1Մ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: